ԱՐԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՈՍԿԵ ՈՐԻԿ

Հաստատված է
Հայաստանի
Հանրապետության
Լուսավորության
նախարարության
կողմից

ԵՐԵՎԱՆ 1995

Աիդա Պետրոսյան
ՈՍԿԵՓՈՐԻԿ
ԵՐ. «ՆՈՐ ԴՊՐՈՑ» 1995
64 էջ

© «Նոր դպրոց» հրատարակչություն

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Կազմեց՝
ԱԻԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

«ՆՈՐ ԴՊՐՈՑ»
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 1995

Եթե դուք մանկապարտեզի ավագ խմբի դաստիարակ եք, առաջին դասարանի դասվար կամ 6-8 տարեկան երեխայի ծնող, ապա «Ոսկեփորիկը» կարող է դառնալ ձեր լավ օգնականը:

Գրքույկը դասական հեղինակների ստեղծագործություններ-ի, առած-ասացվածքների, հանելուկների, խաղերի ու երգերի ժողովածու է:

«Ոսկեփորիկում» զետեղված նյութերի մեծագույն մասը բեռանացի անելու համար է նախատեսված: Ինչպե՞ս աշխատել «Ոսկեփորիկով». այս հարցի պատասխանը կգտնեք «Գիրք ծնողների եւ ուսուցիչների համար» մեթոդական ուղեցույցում:

«Նոր դպրոց» հրատարակչություն

ՇՈՒՆՐՈՒՆՈ՞Ւ...

Մշակումը՝ Հ. Թումանյանի

ԱՐՏՈՒՏԻԿ

Ժողովրդական

Արտուտիկ,
Նախշուն տոտիկ,
Իջնեն կալեր
Գողտիկ-մողտիկ,
Ընտրեն քարեր,
Ուտեն կուտիկ
Կըծըլվըլան
Կըլթիկ-կըլթիկ:

Ա. Խնկոյան

ՄԵՂՈՒ

Պըզզան, պըզզան,
Պըզպըզան,
Պստիկ մեղու տըզտըզան,
Դաշտ ու հովիտ կշրջես,
Բարձր սարեր կթռչես,
Սուսան սմբուլ կծծես
Ու ոտքերով թավամազ
Փոշի առած՝ տուն կգաս:

Ա. Խնկոյան

ԱՔԱՂԱՂՆ ՈՒ ԿՏՈՒՐԸ

Մի աքաղաղ
Կարմրապեծիկ,
Իր ոտները
Երկար ու ձիգ,
Կտրին տալով՝
Վեր-վեր ձգվեց

Ու զարմանքով
Ի՞նչ հարց տվեց.
- Էս ո՞նց է որ
Ես զոռ տալիս,
Էս կտուրը
Փուլ չի գալիս:

Հ. Թումանյան

ՓԻՍՈՆ

Փիսոն, փիսոն մլավան,
Թավրիզ թողեց, փախավ Վան,
Լեզուն թաթխան, երկար պոչ,
Ինչ որ ուզեց, ասին՝ ո՛չ:
Փիսոն գնաց գողեգող,
Փորը դատարկ, սիրտը դող,
Դունչը մեկնեց կովկիթին,
Շերեփն իջավ ճակատին:

Հ. Թումանյան

ԾԻՏԻԿԻ ՕՐՈՐՔԸ

Կախված է ճյուղքից ճոճը ծիտիկի.
Փըչի՛, հովի՛կ, փըչի՛,
Ճոճն օրորվի, տանի բերի.
Նանի՛. ծիտի՛կ, նանի՛:

Ծիտիկը անուշ երազ է տեսնում.
Փըչի՛, հովի՛կ, փըչի,
Ճոճն օրորվի, տանի բերի,
Նանի՛, ծիտի՛կ, նանի՛:

Բայց տես, ծիտիկը քընից չըզարթնի, Կամա՛ց փըչի, կամա՛ց,
Ճոճն էլ զգույշ տանի բերի,
Նանի՛, ծիտի՛կ, Նանի՛:

Հ. Թումանյան

ՇՈՒՆԸ

Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ,
Ահա այսպես
Հաչում եմ ես.
Հաֆ-հա՛ֆ, հաֆ-հա՛ֆ.
Ու տունն այսպես
Պահում եմ ես:
Թե գա մեզ մոտ
Մի հին ծանոթ,
Մոտն եմ վազում,
Պոչըս շարժում:

Բայց թե մի գող,
Չար կամեցող
Ուզի թաքուն
Մտնի մեր տուն,
Հա՛ֆ-հա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ,
Ահա այսպես
Հաչում եմ ես,
Հա՛ֆ-հա՛ֆ, հա՛ֆ-հա՛ֆ,
Ու տունն այսպես
Պահում եմ ես:

Հ. Թումանյան

ԱՂՎԵՍՆ ԵԿԱՎ

Աղվեսն եկավ լանճիկ, լանճիկ,
Ոտներ ուներ կարճիկ, կարճիկ,
Շատ կու սիրեր հավի քարճիկ,
Վու՜յ, վու՜յ:

Աղվես պառկեց արտի տակին,
Աչքը ձգեց չաղ հավ ձագին,
Նետով կը տամ աչքի տակին,
Որ մոտ չգա նա մեր բակին,
Վու՜յ, վու՜յ:

Հ. Թումանյան

ՓԻՍԻԿԻ ԳԱՆԳԱՏԸ

Փիսիկը նստել
Մի մուք անկյունում,
Ունքերը կիտել
Ու լաց է լինում:
Մոտիկ է գալիս
Մի ուրիշ կատու.
Ինչո՞ւ ես լալիս,
Ա՛յ փիսո ջան, դու...
- Հապա ի՞նչ անեմ,
Որ լաց չլինեմ,
Գանգատ է անում
Փիսոն տըխրադեմ:
Էն Համոն թաքուն
Մածունը կերավ,
Գնաց տատի մոտ
Ինձ վըրա դրավ:
Հիմի տատիկի
Ետեւից ընկած,
Ինձ են ման գալի
Մի-մի փետ առած
Էն քոթոթ Սուրենն,
Անոն ու Մոսոն:
Ո՞ւր է, ասում են,
Ու՞ր է գող Փիսոն,
Ա՜խ, թե մի գըտա՜նք,
Մածուն ցույց կըտանք...
Էսպես բան սարքեց
Էն Համոն իմ դեմ.
Ի՞նչ անեմ հապա,
Որ լաց չըլինեմ...
Ու Փիսոն նըստել
Մի մուք անկյունում,
Ունքերը կիտել
Ու լաց է լինում:

Մանկական խաղ Ղ. Աղայան

ԾԻՏԸ ԵՎ ԲԱԶԵՆ

Ծիտը ծառին ծլվլում է.
- Ծի՜վ, ծի՜վ, ծի՜վ.
Բազեն գլխին պտըտվում է.
- Վու՜յ, վու՜յ, վու՜յ...
Ծիտը լռեց, ծիտը վախեց.
- Վա՜յ, վա՜յ, վա՜յ...
Բազե՜, թը՜ռռ, բազե՜, թը՜ռռ.
- Հա՜յ, հա՜յ, հա՜յ...
Բազեն թռավ,
Բազեն փախավ,
Ի՜նչ լավ էլավ...
- Հե՜-հե՜-հե՜...
Ծիտի՛կ-միտի՛կ, պիծի՛կ-միծի՛կ,
Պըտպըտուրի՛կ, չըլպըլտուրիկ,
Դու լա՛վ պրծար չար բազեի
Սուր ճանկերից, հա՜-հա՜-հա՜...

Հ. Թումանյան

ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

- Ծուղրուղո՜ւ.
Աքլորը զիլ կանչեց թառին.
-Ճի՛կ-ճի՛կ, ճի՛կ-ճի՛կ,
Զարթնեց մթնում ծիտը ծառին:

- Ծուղրուղո՜ւ.
Խոսեց ծեգին երկրորդ բերան.
- Հո-հո՜, հո-հո՜,
Նախիրն արդեն հաճդը տարան:

- Ծուղրուղո՜ւ.
Լույսը բացվեց երրորդ կանչին,
- Վու՛յ, վու՛յ, վու՛յ, վու՛յ,
Նստեց նանը տեղի միջին:

Ղ. Աղայան

ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Արեգակը դուրս է եկել
Պսպղղալով.
Ծողքը երդից ներս է ընկել
Ծողշողալով.
Ծիտը ծառին կըչկըչում է
Ծըլվըլալով.
Ջորումն առուն քըչքըչում է
Վըշվըշալով.
Ծույլ տղայի քունն է տարել
Խռըմփալով.
Տրեխները շունն է տարել
Մըռմըռալով:

Ա. Խնկոյան

ՊՈՉԱՏ ԱՂՎԵՍԸ

Փախավ աղվեսը,
Փախավ թակարդից,
Բայց պոչի կեսը
Թողեց նա ներսը:

Այդպես պոչատ,
Պոչից անջատ,
Գնաց ասավ ընկերներին.
- Ա՛յ ձեզ մատաղ, ես ձեր գերին,
Դե՛ն գցեցեք ձեր պոչերը.
Ինչո՞ւ են պետք այդ փրչերը:
Իրանք զարդ չեն ու զարդարանք,
Այլ մեր գլխին պատիժ, փորձանք,

Գետնի ավել,
Վազքի խափան,
Մեզ անվայել
Ավելորդ բան:

Այդտեղ մի ծեր վարպետ աղվես
Ասավ նրան. «Ապրե՛ս, ապրե՛ս,
Ա՛յ ծակամուտ թոռիս թոռը,
Էդքան չեն տա խելքի զոռը,
Բա քանի որ տեղն էր պոչդ,
Ինչո՞ւ չարիր դու այդ կոչդ»:

Հ. Թումանյան

ԳՐԻՉ

Ի՞նչ կըլինի, ասա՛, գրի՛չ,
Ինձ էլ սիրես գոնե մի քիչ:
Ինչո՞ւ իմ մեծ քրոջ ձեռքին
Գրում ես միշտ վարժ ու կարգին,
Իսկ իմ ձեռքին խազմըզում ես
Սեւ ագռավի ճանկերի պես:
Ես քեզ վատ բան ի՞նչ եմ արել:
Ե՛կ, խնդրում եմ՝ ինձ համար էլ
Գրի էնպես արագ-արագ,
Էնպես ուղիղ, սիրուն, բարակ:
Գրիչը լուռ լըսում, լըսում,
Ճըռճըռում է ու խազմըզում,
Բայց այս անգամ արդեն, կարծես,
Փոքրիկ ծըտի ճանկերի պես:

Հ. Թումանյան

ԱՌԱՋԻՆ ՁՅՈՒՆԸ

- Վա՜յ, մայրի՛կ ջան, տե՜ս,
Բակն ու դուռը լի
Ինչքա՜ն սպիտակ
Թիթեռ է գալի...
Էսքան շատ թիթեռ
Չեմ տեսել ես դեռ:
- Չէ՛, իմ անուշիկ,
Թիթեռներ չեն էտ,
Թիթեռներն անցան
Ծաղիկների հետ:
Էտ ձյունն է գալիս,
Փաթիլն է ձյունի,
Որ կարծես սպիտակ
Թիթեռնիկ լինի:

Փոխադրությունը՝ Ա. Խնկոյանի

ՊԱՊՆ ՈՒ ՇԱՂԳԱՄԸ

Դռան առաջ
Մի անգամ
Պապը ցանեց
Մի շաղգամ:

Շաղգամն աճեց,
Մեծացավ.
Պապը տեսավ՝
Զարմացավ:

Պապը քաշեց
Քաշքշեց,
Շաղգամն հողից
Չհանեց:

Պապը կանչեց
Տատիկին.
Տատը՝ պապից,
Պապը՝ շաղգամից,
Հա քաշեցին,
Քաշքշեցին,
Շաղգամն հողից
Չհանեցին:

Տատը կանչեց
Թոռնիկին.
Թոռը՝ տատից,
Տատը՝ պապից,
Պապը՝ շաղգամից,
Հա քաշեցին,
Քաշքշեցին,
Շաղգամն հողից
Չհանեցին:

Թոռը կանչեց
Շնիկին.
Շունը՝ թոռից,
Թոռը՝ տատից,
Տատը՝ պապից,
Պապը՝ շաղգամից,
Հա քաշեցին,
Քաշքշեցին.
Շաղգամն հողից
Չհանեցին:

Շունը կանչեց
Փիսոյին.
Փիսոն՝ շնից,
Շունը՝ թոռից,
Թոռը՝ տատից,
Տատը՝ պապից,
Պապը՝ շաղգամից,
Հա քաշեցին,
Քաշքշեցին,
Շաղգամն հողից
Չհանեցին:

Փիսոն կանչեց
Մկնիկին.
Մուկը՝ փիսոյից,
Փիսոն՝ շնից,
Շունը՝ թոռից,
Թոռը՝ տատից,
Տատը՝ պապից,
Պապը՝ շաղգամից,
Հա քաշեցին,
Քաշքշեցին,
Շաղգամն հողից
Հանեցին:

Հ. Թումանյան

ԲԶԵԶԻ ԴՊՐՈՑԸ

Վարպետ Բզեզն ամռան մի օր
Դպրոց բացեց մեծ ծառի տակ
Ու հավաքեց թիթեռ, ճանճ, բոռ,
Մրժեղ, մրրջյուն, մրլակ, մոծակ...

- Գիտե՞ք, ասավ, իմ փոքրիկներ,
Պիտի սովրեք, սովրեք անվերջ,
Որ իմանաք ինչ է ձեզ պետք,
Ինչ կա ձեր շուրջն ու կյանքի մեջ:

Պիտի սովրեք, սովրեք էնքան,
Մինչեւ դառնաք ինձ պես վարպետ:
Դե ընտեցեք հիմի հանդարտ,
Ինչ որ կասեմ՝ կրկնեք ինձ հետ:

Ա. Անթառամ, Բ. Բարձմենակ,
Գ. Գաղտիկուռ, Դ. Դրդում...
Է՜յ, դու մորե՜խ, դեսն ականջ դիր,
Ի՞նչ ես էդտեղ կըտրտում:

Ե. Երիցուկ, Զ. Զանազան,
Է. Էշխըրտուկ, Ը. Ընկույզ...
Մի՛ աղմկեք, հանաք հո չի՞.
Թիթե՛ռ, հանգիս՛տ, մոծակ, սո՛ւս:

Մի խառնըվեք, չեմ սիրում ես
Էդպես աղմուկ, աղաղակ:
Թ. Թրրթընջուկ, Ժ. Ժախ ու բոխ,
Ի. Իշառվույտ, Լ. Լեղակ:

Խ. Խրնձորուկ, Ծ. Ծիրան,
Կ. Կըռոթուկ, Հ. Հաղարջ...
- Տե՛ս, վարժապետ, էս մրլակին.
Ինձ ասում է՝ սարի արջ:

- Ա՛յ տղա, է՜յ, չեն հայհոյիլ:
Տըզզան հիմար անասուն...
Ջ. Ջրմերուկ, Ղ. Ղանձլամեր,
Ճ. Ճարճատուկ, Մ.Մասուր:

Դու, է՜յ ծըղրիդ, ո՞նց ես նըստել,
Գըլուխդ՝ ետ, մեջքըդ՝ դուրս:
Յ. Յունապի, Ն. Նունուֆար,
Ծ. Ծագանակ, Ռ. Ռղկույզ:

Վա՜յ, էս ինչե՜ր կան դասերում.
Ռղկույզը ես շատ եմ սիրում: -
Իսկ ես կաղամբ կուտե՜մ, կուտե՜մ...
- Իսկ ես՝ ծիրան... Իսկ ես՝ կոտեմ...

Ձեզ չեն հարցնում՝ ի՜նչ կուտեք դուք
Քընաքաքախ՝ առտեհան:
Չ. Չինարի, Պ. Պատատուկ
Ջ. Ջըրկոտեմ, Ռ. Ռեհան:

Ս. Սերկեւիլ, Վ. Վարդենի,
Տ. Տերեփուկ, Ց. Ցաքի...
Ո՜ւհ, մարդ քարից պիտի լինի,
Ձեր մեջ գըլուխ կըճաքի:

Փ. Փըրփըրուկ, Ք. Քարասոխ,
Օ. Օֆ, պըրծանք վերջապես...
Դե գնացեք, վաղը կգաք
Անգիր արած ջըրի պես: -

Ու հավաքած թիթեռ, ճանճ, բոռ,
Մըժեղ, մըրջյուն, մըլակ, մոծակ,
Վարպետ Բըզեզն ամառն էսպես
Դաս էր տալիս մի ծառի տակ:

Դ. Դեմիրճյան

ՊՈՒՅՊՈՒՅ ՄՈՒԿԻԿԸ

Մի երկիր կա՝ Հնդստան,
Մի մուկիկ կար՝ ճստճստան,
Հնդստանի անտառում,
Կոկոս ծառի ծակուռում:

Ապրում էր նա իր համար,
Բարիքներում անհամար
Ու մի օր լավ, մի օր վատ՝
Ուներ ապրուստ քիչ թե շատ:

Օրը մի ճանճ, մի միջատ,
Մի ծեղ, արմատ, ցորենի հատ
Ուտում էր ու քեֆ անում,
Խաղում, ապրում իր բնում:

Իր անունը Պույպույ էր,
Ազգանունը՝ Ճստունի:
Լացը՝ վա՜յ-վա՜յ, վո՜ւյ-վո՜ւյ էր,
Երգը՝ տարայ-նա՜յ-նի՜ նի՜:

Էսպես մուկիկն ապրում էր,
Վազվզելով վար ու վեր
Ու մի օր էլ ծանր ու մեծ
Իրեն-իրեն միտք արսեց.

«Տունս կոկոս ծառի տակ,
Բերան չունե՞մ, թե՞ ճաշակ.
Ճանճ կերել եմ, ծեղ կերել,
Տեսնեմ կոկոսի համն էլ»:

Այս ասելն էր, մեկ էլ, դո՜մփ,
Ծառից կոկոսն ինչպես բոմբ
Ընկավ նրա առաջին:
- Կոկո՜ս, կաղին չէ չնչին:

Կաղնի տեսակ, սեխի չափ,
Միջուկն անու՜շ, յուղալի՜,
Բայց կեղեւն է միայն հաստ,
Ահա ինչն է ցավալի...

Վրա ընկավ մուկիկը,
Բացեց իր սուր ճանկերը,
Կծեց, կծեց, կծոտեց,
Բան դուրս չեկավ, չհաջողվեց:

Ու կոկոսի չորս կողմը
Ման է գալիս Պույպույը:
Կեղեւն հաստ է, ո՞նց անի,
Ու սկսեց վույ-վույը:

«Ախր ի՞նչ է, ի՞նչ կըլի,
Տեսնեմ դրա համն էլի՜:
Մի քիչ կոկոս, մի քիչ ջուր,
Գոնե մի կում, մի պուճուր»:

Դու մի ասի՝ ընկնելուց
Ծակ էր բացվել կոկոսում,
Էդ որ տեսավ, հիմի էլ
Ծակից մտնել էր ուզում:

Բայց տեսեք ինչ պատահեց.
Ծակն էր պստիկ, ինքը՝ մեծ:
Ծակից ներս չի մտնում,
Սովից էլ ուշքն է գնում:

Լաց է լինում մուկիկը...
Ո՞նց լաց չըլնի մուկիկը...
Սիրտն ուրիշ բան չի ուզում,
Նայում է ու նվազում:

Էսպես լացեց, սուգ արեց,
Էնքան լացեց, սուգ արեց,
Հետն էլ սովից լղարեց:

Ու լղարեց, բարակեց,
Մեկ էլ, ըհը՛, ճանճի պես
Ծակից մտավ, գնաց ներս:

Էս ի՞նչ էր, տո՛, ո՞նց եղավ,
Էս ծակից ո՞նց ներս մտավ,
Ո՞նց, ա՛յ, նայի՛ր, էս՝ մուկը.
Էս՝ կոկոսն ու միջուկը:

Դե, քեֆ արա, օխա՜յ-օխա՜յ,
Դե, պար արի, տարա՜յ-նանա՜,
Դե, միջուկը կե՛ր ու կրծի՛ր,
Կե՛ր միջուկը, հյութը խմի՛ր:

Հա՛մ ուտում է, հա՛մ էլ պարում,
Հա՛մ պարում է, հա՛մ էլ երգում.
«Ինքս Պույպույ, պարս՝ տույտույ,
Էլ ի՞նչ վայ-վայ, էլ ի՞նչ վույ-վույ»:

Էսպես թռչում, ծափ էր տալիս,
Պար էր գալիս, ռանգի, յայլի,
Գոռում էր, ջա՜ն, տարայ-նի-նի,
Ա՛յ թե քեֆը ինչպես կընի:

Էս որ էսպես կերավ, մաքրեց,
Առաջ փոքր էր, հիմա տոզեց,
Տոզեց, դարձավ խոշոր մի մուկ,
Ընկավ կողքին, քնեց խորունկ:

Մեկ օր անցավ, եկավ նոր օր,
Է՛հ, մուկիկը վեր կացավ, որ
Փուչ կոկոսի ծակից դուրս գա,
Ախր դուրսը գործ կա, տուն կա:

«Լավ էր, կերանք բավականին,
Հիմա գնանք մենք մեր բանին»:
Հեշտ էր ասել... Ապա՞ փորձիր
Մի կոկոսի ծակից անցիր:

Մոտեցավ, որ ծակից դուրս գա,
Պահո՜... Տեսավ ճամփա չկա,
Ինքը խոշոր, ծակը պուճուր...
Այդ է՝ մնաց, բայց մնա ո՛ւր...

Լաց է լինում մուկիկը:
Ո՞նց լաց չընի մուկիկը:
Տոզել է կոկոսում,
Մնացել է նեղ փոսում:

Ախր ի՞նչ բան ունեիր,
Գայիր կոկոս ուտեիր,
Չոռ ուտեիր՝ լավ չէ՞ր, հը՞,
Ցավ ուտեիր, լավ չէ՞ր, հը՞...
Վա՜յ, վա՜յ, վա՜յ, վա՜յ, տո զահրումա՜ր,
Դե լաց, մնա քեզ համար»:

Էսպես լացեց մուկիկը.
Էնքան լացեց մուկիկը,

Հետո էլ սովից լղարեց:
Որ լղարեց, բարակեց,
Մեկ էլ, ըհը՛, սուս ու փուս
Ծակից նորից ելավ դուրս:

Վա՛հ, էս ինչ էր, էս ո՞նց եղավ,
Բա էս ծակից ո՞նց դուրս եկավ,
Ո՞նց... ա՛յ, նայի՛ր, էս ես՝ մուկը,
Էն՝ կոկոսը, էն՝ միջուկը:

Տեսա՞ր լավ բան, կեցցե՛ս Պույպույ,
Տո՛, էլ ի՞նչ «վայ», էլ ի՞նչ «վույ-վույ»,
Դե, քեֆ արա, օխա՜յ-օխա՜յ,
Դե, պա՛ր արի, տարա՛յ-նի-նայ...

Հա՛մ թռչում է. հա՛մ պարում է,
Հա՛մ երգում է, հա՛մ կանչում է,
- Ջա՜ն, քե՛ֆ արա, տարայ-նի-նի՜
Ա՛յ թե քեֆը ինչպես կընի:

Հ. Թումանյան

ՃԱՄՓՈՐԴՆԵՐ

Աքլորը մի օր կտուրը բարձրացավ, որ աշխարհք տեսնի: Վիզը ձգեց, երկարացրեց, բայց բան չտեսավ, դիմացի սարը խանգարում էր:

- Քուչի՛ ախպեր, կարելի է դու գիտենաս, թե սարի ետեւը ի՞նչ կա, - հարցրեց վերեւում պառկած շանը:

- Ես էլ չգիտեմ, - պատասխանեց քուչին:

- Հապա մինչեւ ե՞րբ պիտի այսպես մնանք, արի՛ գնանք տեսնենք՝ աշխարհումս ինչ կա, ինչ չկա:

Շունն էլ համաձայնեց: Խոսքը մին արին ու փախան: Գնացին, գնացին, իրիկունը հասան մի անտառ: Գիշերը մնացին էնտեղ: Շունը պառկեց մի թփի տակ, իսկ աքլորը բարձրացավ մոտիկ ծառին, քնեցին: Լուսադեմին աքլորը կանչեց՝ ծուղրուղո՛ւ: Մի աղվես լսեց աքլորի ձայնը:

- Վա՜հ, սա որտեղի՞ց դուրս եկավ, ա՜յ լավ նախաճաշիկ, - մտածեց աղվեսն ու վազեց:

- Բարի՛ լույս, սանահեր աքլոր: Ի՞նչ ես շինում էս կողմերը:

- Գնում ենք աշխարհ տեսնելու, - պատասխանեց աքլորը:

- Օ՜, ինչ լավ բան եք մտածել, - խոսեց աղվեսը: Քանի ժամանակ է ես էլ մի կարգին ընկերի եմ մտնում գալի: Ինչ լավ էր՝ պատահեցինք: Դե՜, ցած արի, որ չուշանանք:

- Ես համաձայն եմ, - ասավ աքլորը, - տես թե ընկերս էլ համաձայն է, ցած գամ՝ գնանք:

- Որտե՞ղ է ընկերդ: - Էն թփի տակին: «Սրա ընկերն էլ երեւի իր նման մի աքլոր կլինի, էս էլ իմ ճաշը». - մտածեց աղվեսը ու վազեց թփի կողմը: Հանկարծ, որ շունը դուրս եկավ, աղվեսը, պո՜ւկ, փախավ, ո՜նց փախավ:

- Կա՛ց, աղվես ախպեր, մի՛ վռազի, մենք էլ ենք գալի, էդպես ընկեր չի լինի, - ծառի գլխից ձայն էր տալիս աքլորը:

Հ. Թումանյան

ՈՒԼԻԿ

Խոր անտառում մի այծ է լինում:

Ունենում է մի գեղեցիկ ուլ: Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գնում է արոտ անելու: Արածում է ու իրիկունը կուրծքը լիքը տուն է գալի: Տուն է գալի, դուռը զարկում ու մկկում, էսպես կանչում.

Սեւուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարե սար,
Կաթն եմ բերել քեզ համար,
Դռնակը բաց ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ:
Սեւուկ ուլիկ, Սիրուն բալիկ:

Ուլիկն իսկույն վեր է թռչում, դուռը բաց անում: Մայրը ծիծ է տալի նրան ու կրկին գնում արոտ: Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը: Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը զարկում ու իր հաստ ձայնով կանչում.

Սեւուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարե սար,
Կաթն եմ բերել քեզ համար,
Դռնակը բաց ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ:
Սեւուկ ուլիկ, Սիրուն բալիկ:

Ուլիկը լսում է, լսում ու պատասխանում. «Էդ ո՞վ ես դու, չեմ ճանաչում: Նա քաղցր ու բարակ ձայն ունի: Քու ձայնը կոշտ է ու կոպիտ: Դուռը բաց չե՛մ անի... Գնա՛... Չեմ ուզում քեզ...»: Ու գայլը հեռանում է, գնում: Գալիս է մայրը, դուռը ծեծում.

Սեւուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարե սար,
Կաթն եմ բերել քեզ համար,
Դռնակը բաց ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ:
Սեւուկ ուլիկ, Սիրուն բալիկ:

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մորը պատմում: - Գիտե՞ս, մայրի՛կ, ինչ եղավ: Մի քիչ առաջ մինը եկավ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սեւուկ ուլիկ,
Սիրուն բալիկ:

Ասում էր դուռը բաց արա: Էնպե՞ս հաստ ձայն ունե՞ր: Էնպե՞ս վախեցա՞, էնպե՞ս վախեցա՞... Դուռը բաց չարի, ասի՝ չեմ ուզում, գնա՛...

- Պա՛, պա՛, պա՛, պա՛: Սեւուկ ջան, ինչ լավ է եղել, որ բաց չես արել. - ասավ վախեցած մայրը: - Էդ գայլն է եղել, եկել է, որ քեզ ուտի: Մյուս անգամ էլ որ գա, բաց չանես. ասա՝ գնա՛, թե չէ իմ մայրը քեզ կսպանի իր սուր պոզերով:

Հ. Թումանյան

ԱՆՀԱՂԹ ԱՔԼՈՐԸ

Լինում է, չի լինում՝ մի աքլոր է լինում:

Էս աքլորը քուջուջ անելիս ոսկի է գտնում:

Կտուրն է բարձրանում, ձեն է տալի.

- Ծուղրուղո՜ւ, փող եմ գտե՜լ...

Թագավորը լսում է, իր նազիր-վեզիրներին հրամայում է՝ գնան խլեն բերեն:

Նազիր-վեզիրը գնում են՝ խլում բերում:

Աքլորը կանչում է.

- Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձանով ապրե՜ց...

Թագավորը ոսկին ետ է տալիս իր նազիր-վեզիրին, ասում է.

- Ետ տարեք իրեն տվեք, թե չէ աշխարհքովը մին կխայտառակի մեզ էդ անպիտանը...

Նազիր-վեզիրը ոսկին տանում են ետ տալիս աքլորին:

Աքլորն էլ կտուրն է բարձրանում.

- Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձանից վախե՜ց...

Թագավորը բարկանում է, իր նազիր-վեզիրին հրամայում է.

- Գնացե՛ք, - ասում է, - բռնեցեք էդ սրիկային, գլուխը կտրեցեք, եփեցեք, բերեք ուտեմ, պրծնեմ դրանից:

Նազիր-վեզիրը գնում են աքլորին բռնում, որ տանեն: Տանելիս կանչում է.

- Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձ հյուր է կանչե՜լ...

Տանում են մորթում, պղինձն են կոխում, որ եփեն, ձեն է տալի.

- Ծուղրուղո՜ւ, թագավորն ինձ տաք-տաք, բաղնիք է դրկե՜լ...

Եփում են բերում թագավորի առաջն են դնում, կանչում է.

- Թագավորի հետ սեղան եմ նստե՜լ, ծուղրուղո՜ւ...

Թագավորը շտապով վերցնում է կուլ տալի: Կոկորդով գնալիս կանչում է.

- Նեղ-նեղ փողոցներով անց եմ կենում, ծուղրուղո՜ւ...

Թագավորը որ տեսնում է՝ կուլ տվեց, էլ չի ձենը կտրում, իր նազիր-վեզիրին հրամայում է թուրները հանած պատրաստ կենան, որ մին էլ ձեն ածի՝ զարկեն:

Նազիր-վեզիրը թրերը հանած՝ պատրաստ կանգնում են՝ մինը էս կողմը, մյուսը՝ էն:

Աքլորը որ թագավորի փորն է հասնում, ձեն է տալի.

- Լույս աշխարհքումն էի, մութ տեղն եմ ընկել, ծուղրուղո՜ւ...

- Զարկեցե՛ք, - հրամայում է թագավորը:

Նազիր-վեզիրը զարկում են, տալիս են թագավորի փորը պատռում:

Աքլորը դուրս է պրծնում, փախչում է, կտեր ծերին կանգնում ձեն տալի.

- Ծուղրուղո՜ւ...

Թարգմանությունը՝ Մ. Խերանյանի

ՈՎ ԱՇԽԱՏԻ, ՆԱ ԿՈՒՏԻ

Ռուսական ժողովրդական հեքիաթ

Մի խրճիթում ապրում էին մուկիկը, ծիտիկը եւ հավիկը:

Մի օր քջուջ անելիս հավիկը մի հատիկ գտավ ու կանչեց.

- Հատիկ եմ գտե՜լ, հատիկ եմ գտել: Ո՞վ կտանի աղալու:

- Ես՝ չէ, - ասաց մուկիկը:

- Ես էլ՝ չէ, - ասաց ծիտիկը:

Ի՞նչ աներ հավիկը: Հատիկը ջրաղաց տարավ, աղաց:

- Ալյուրն ո՞վ տուն կտանի, - հարցրեց հավիկը:

- Ես՝ չէ, - ասաց ծիտիկը:

- Ես էլ՝ չէ, - ասաց մուկիկը:

Հավիկը ալյուրը շալակեց, տուն տարավ:
Ո՞վ խմոր կանի, - հարցրեց հավիկը:
- Ես՝ չէ, - ասաց մուկիկը:
- Ես էլ՝ չէ, - ասաց ծիտիկը:
Հավիկը խմոր հունցեց:
- Թոնիրը ո՞վ կվառի, - հարցրեց հավիկը:
Ես՝ չէ, - ասաց ծիտիկը:
Ես էլ՝ չէ, - ասաց մուկիկը:
Հավիկը թոնիրը վառեց:
- Հացն ո՞վ կթխի, - հարցրեց հավիկը:
- Ես՝ չէ, - ասաց մուկիկը:
- Ես էլ՝ չէ,- ասաց ծիտիկը:
Հավիկը հացը թխեց, դրեց սեղանին:
- Հացն ո՞վ կուտի, - հարցրեց հավիկը:
- Ե՜ս, - գոչեց ծիտիկը եւ մոտեցավ սեղանին:
- Ե՜ս, - գոչեց մուկիկը եւ մոտեցավ սեղանին:
- Հավիկը նրանց սեղանից հեռացրեց ու ինքը մենակ կերավ հացը:

Հ. Թումանյան

ՍՈՒՏԱՍԱՆԸ

Լինում է, չի լինում մի թագավոր: Էս թագավորը իր երկրումը հայտնում է.

«Ով էնպես սուտ ասի, որ ես ասեմ՝ սուտ է, իմ թագավորության կեսը կտամ նրան»:

Գալիս է մի հովիվ: Ասում է.

- Թագավորն ապրած կենա, իմ հերը մի դագանակ ուներ, որ էստեղից մեկնում էր, երկնքում աստղերը խառնում:

- Կպատահի՛, - պատասխանում է թագավորը: - Իմ պապն էլ մի չիբուխ ուներ. մի ծերը բերանին էր դնում, մյուս ծերը մեկնում, արեգակից վառում:

Ստախոսը գլուխը քորելով դուրս է գնում:

Գալիս է մի դերձակ: Ասում է.

- Ներողությո՛ւն, թագավո՛ր, ես վաղ պիտի գայի, ուշացա: Երեկ շատ անձրեւ եկավ, կայծակները տրաքեցին, երկինքը պատռվեց, գնացել էի կարկատելու:

- Հա՛, լավ ես արել, - ասում է թագավորը, - բայց լավ չէիր կարկատել, էս առավոտ մի քիչ անձրեւ թափվեց:

Սա էլ է դուրս գնում:

Ներս է մտնում մի աղքատ գյուղացի, կոտը կոնատակին:

- Դո՞ւ ինչ ես ուզում, ա՛յ մարդ, - հարցնում է թագավորը:

- Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանեմ:

- Մի կոտ ոսկի՞, - զարմանում է թագավորը: - Սո՛ւտ ես ասում, ես քեզ ոսկի չեմ պարտ:

- Թե որ սուտ եմ ասում, թագավորությանդ կեսը տուր:

- Չէ՛, չէ՛, ճշմարիտ ես ասում, - խոսքը փոխում է թագավորը:

- Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր:

Փոխադրությունը՝ Հ. Թումանյանի

ԵՐԵՔ ԱՐՋԻ ՀԵՔԻԱԹԸ

Ռուսական ժողովրդական հեքիաթ

Մի աղջիկ է լինում: Մի անգամ էս աղջիկը անտառ է գնում: Անտառում մոլորվում է, ճամփա չի գտնում, գալիս է դեմ առնում մի տնակի:

Դուռը բաց է լինում: Նայում է, տեսնում տանը ոչ ոք չկա:

Ներս է մտնում: Դու մի՛ ասա՝ էս տնակում երեք արջ են ապրում՝ հայրը, մայրը եւ իրենց քոթոթը: Էդ ժամանակ գնացած են լինում անտառ՝ ման գալու: Տնակը ունենում է երկու սենյակ՝ մինը սեղանատուն, մյուսը՝ ննջարան:

Էս աղջիկը սեղանատուն է մտնում, տեսնում սեղանի վրա դրած երեք աման ապուր: Առաջինը՝ հոր ամանը, մեծ է լինում, երկրորդը՝ մոր ամանը, միջակ, երրորդը՝ քոթոթի ամանը, փոքրիկ: Ամեն մի ամանի մոտ էլ մի-մի գդալ է լինում՝ մեծ, միջակ ու փոքր:

Աղջիկը վերցնում է մեծ գդալը, ուտում մեծ ամանից, անհամ է լինում:

Հետո վերցնում է միջակ գդալը, ուտում միջակ ամանից, դուր չի գալի:

Հետո վերցնում է փոքր գդալը, ուտում փոքր ամանից: Տեսնում է՝ փոքր ամանի ապուրը համով է:

Ուզում է նստել՝ տեսնում է երեք աթոռ՝ մեկը մեծ, մյուսը՝ միջակ, երրորդը՝ փոքր: Բարձրանում է մեծ աթոռին՝ ընկնում է: Նստում է միջակ աթոռին՝ անհարմար է: Նստում է փոքր աթոռին, քեֆը գալիս է, էնքան լավն է լինում: Վերցնում է փոքր ամանը, դնում ծնկներին ու սկսում փոքր գդալով ուտել:

Ուտում է կշտանում ու սկսում աթոռով օրորվել: Աթոռը կոտրվում է, աղջիկը վեր է ընկնում:

Վեր է կենում, աթոռը բարձրացնում ու մտնում մյուս սենյակ:

Մյուս սենյակում երեք մահճակալ է լինում՝ մեկը՝ մեծ, մյուսը՝ միջակ, երրորդը՝ փոքր:

Պառկում է մեծ մահճակալի վրա, տեսնում է շատ է լայն: Միջակի վրա է պառկում՝ տեսնում է՝ շատ է բարձր: Փոքրի վրա պառկում, տեսնում է՝ հենց իրենն է որ կա, ու քնում է:

Արջերը քաղցած գալիս են, որ ճաշեն: Հայրը մոտենում է իր ամանին, մտիկ անում ու զարհուրելի գոռում.

- Էս ո՞վ է կերել իմ ամանից:

Մայրը մտիկ է անում իր ամանին ու փնթփնթում.

- Էս ո՞վ է կերել իմ ապուրը:

Հայրը նայում է իր աթոռին ու գոռում.

- Էս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից շարժել:

Մերն է նայում իր աթոռին ու փնթփնթում.

- Էս ո՞վ է նստել իմ աթոռին ու տեղից շարժել:

Քոթոթն է նայում իր կոտրած աթոռին ու գոմռում.

- Էս ո՞վ է նստել իմ աթոռին ու կոտրել: Մտնում են մյուս սենյակը:

Հայրը նայում է իր մահճակալին ու գոռում.

- Էս ո՞վ է պառկել իմ անկողնուն ու տրորել:

Մայրը նայում է իր մահճակալին ու փնթփնթում.

- Էս ո՞վ է պառկել իմ անկողնու վրա ու տրորել:

Քոթոթն է նայում իր անկողնուն ու գոմռում.

- Էս ո՞վ է պառկել իմ անկողնում:

Հանկարծ աղջկան նկատում է ու էնպես ճղղում, կարծես մորթում էին իրեն:

- Էս ո՞վ է... գտել եմ... հրե՛ս բռնեցե՛ք... վա՜յ... վա՜յ... բռնեցե՜ք:

Եվ ուզում է աղջկան կծել: Աղջիկը վախից վեր է թռչում, աչքերը բաց անում, տեսնում՝ պառկած է իրենց տանը, իր ննջարանում: Ու էս բոլորը երազ է:

Հ.Թումանյան

ՊՈՉԱՏ ԱՂՎԵՍԸ

Լինում է, չի լինում մի պառավ: Էս պառավն իր էծը կթում է, կաթը վեր է դնում, գնում է ցախ ու փետ բերի, որ կրակ անի, կաթն եփի:

Մի աղվես գալիս է, գլուխը կոխում կաթի ամանը, կաթն ուտում:

Պառավը վրա է հասնում, ցաքատով տալիս է, աղվեսի պոչը կտրում:

Պոչատ աղվեսը փախչում է, գնում մի քարի վրա կանգնում է ու էսպես խնդրում.

- Տատի՛կ, տատի՛կ, պոչս տուր, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Պառավն ասում է.

- Դե գնա իմ կաթը բեր:

Աղվեսը գնում է կովի մոտ:

- Կովի՛կ, կովի՛կ, կա՛թ տուր ինձ, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, որտեղ էիր:

Կովն ասում է.

- Դե գնա ինձ համար խոտ բեր:

Աղվեսը գնում է արտի մոտ:

- Արտի՛կ, արտի՛կ, խո՛տ տուր ինձ, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Արտն ասում է.

- Դե գնա ինձ համար ջուր բեր:

Աղվեսը գնում է աղբյուրի մոտ:

- Աղբյո՛ւր, աղբյո՛ւր, ջո՛ւր տուր ինձ, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Աղբյուրն ասում է.

- Դե գնա կուժ բեր:

Աղվեսը գնում է աղջկա մոտ:

- Աղջի՛կ, աղջի՛կ, կուժդ տուր, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ

խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Աղջիկն ասում է.

- Դե գնա ուլունք բեր ինձ համար:

Աղվեսը գնում է չարչու մոտ:

- Չարչի՛, չարչի՛, ուլո՛ւնք տուր, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Չարչին ասում է.

- Դե գնա ինձ համար ձու բեր:

Աղվեսը գնում է հավի մոտ:

- Հավի՛կ, հավի՛կ, ձու-ձու տուր, ձու-ձուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Հավն ասում է.

- Դե գնա ինձ համար կուտ բեր:

Աղվեսը գնում է կալվորի մոտ:

- Կալվո՛ր, կալվո՛ր, կո՛ւտ տուր ինձ, կուտը տանեմ հավին տամ, հավը ինձ ձու տա, ձուն տանեմ չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա, ուլունքը տանեմ աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա, կուժը տանեմ աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա, ջուրը տանեմ արտին տամ, արտը ինձ խոտ տա, խոտը տանեմ կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, որտե՞ղ էիր:

Կալվորի մեղքը գալիս է. մի բուռ կուտ է տալիս: Աղվեսը կուտը տանում է հավին, հավը ձու է տալի, ձուն տանում է չարչուն, չարչին ուլունք է տալի, ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալի, կուժը տանում է աղբյուրին, աղբյուրը ջուր է տալի, ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալի, խոտը տանում է կովին, կովը կաթ է տալի, կաթը տանում է տալի պառավին, պառավը պոչը տալիս է իրեն, կցում է, կցմցում, վազում է գնում, իր ընկերներին հասնում:

Հ. Թումանյան

ԾԻՏԸ

Լինում է, չի լինում մի ծիտ:

Մի անգամ էս ծտի ոտը փուշ է մտնում: Դես է թռչում, դեն է թռչում, տեսնում է՝ մի պառավ փետի է ման գալի, թոնիրը վառի, հաց թխի: Ասում է.

- Նանի՜ ջան, նանի՜, ոտիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Պառավը փուշը հանում է, թոնիրը վառում:

Ծիտը գնում է, ետ գալի, թե՝ փուշը ետ տուր ինձ:

- Փուշը թոնիրն եմ գցել:

Ծիտը կանգնում է, թե՝

- Իմ փուշը տուր, թե չէ դես թռչեմ, դեն թռչեմ, լոշիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Պառավը մի լոշ է տալի: Ծիտը լոշն առնում է թռչում:

Գնում է տեսնում՝ մի հովիվ անհաց կաթն է ուտում: Ասում է.

- Հովիվ ախպեր, կաթն ինչո՞ւ ես անհաց ուտում: Ա՛յ լոշը ա՛ռ, կաթի մեջ բրդի՛, կե՛ր, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի, թե՝ լոշս տուր:

Հովիվն ասում է.

- Կերա:

- Չէ՛, - ասում է, - իմ լոշը տուր, թե չէ դես թռչեմ, դեն թռչեմ, գառնիկդ առնեմ, դուրս թռչեմ:

Հովիվը ճարահատած մի գառն է տալի: Առնում է թռչում:

Գնում է տեսնում՝ մի տեղ հարսանիք են անում, մսացու չունեն, որ մորթեն:

Ասում է. - Ի՞նչ եք մոլորել: Ա՛յ, իմ գառն առեք, մորթեցեք, քեֆ արեք: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, գալի, թե՝ իմ գառը տվեք:

Ասում են. - Մորթել ենք կերել, որտեղի՞ց տանք:

Սա կանգնում է, թե՝ չէ, իմ գառը տալիս եք տվեք, թե չէ՝ դես

թոչեմ, դեն թոչեմ, հարսին առնեմ, դուրս թոչեմ:

Ու հարսին առնում է թոչում:

Գնում է, գնում, գնում է տեսնում՝ մի աշուղ մի ճամփով գնում է:

Ասում է. - Աշուղ ախպեր, առ էս հարսին պահի քեզ մոտ: Ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Գնում է, ետ գալի աշուղի առաջը կտրում, թե՝ իմ հարսը ինձ տուր:

Աշուղը ասում է, - Հարսը գնաց իրենց տուն:

Սա թե՝ չէ, իմ հարսը տուր, թե չէ՝ դես թոչեմ, դեն թոչեմ, սազիկդ առնեմ դուրս թոչեմ:

Աշուղը սազը տալիս է իրեն:

Սազն առնում է, ուսը գցում, թոչում, մի տեղ նստում է, սկսում է ածել ու ճըտվըտալով երգել.

- Ծընգլը, մընգլը, Փուշիկ տվի, լոշիկ առա, Լոշիկ տվի, գառնիկ առա, Գառնիկ տվի, հարսիկ առա, Հարսիկ տվի, սազիկ առա, Սազիկ առա, աշուղ դառա, Ծընգլը, մընգլը, Ծի՜վ-ծի՜վ:

Մին էլ հանկարծ սազը վեր ընկավ ջարդվեց, ծիտը թռավ գնաց, հեքիաթն էլ վերջացավ:

Հ.Թումանյան

ԵՐԿԻՆՔԸ ՓՈՒԼ Է ԳԱԼԻՍ

Լինում է, չի լինում՝ մի Ճստիկ-Ճուտիկ: Էս Ճստիկ-Ճուտիկը մի օր ծածուկ մտնում է դրացու պարտեզը, որ քուջուջ անի:

Մեկ էլ հանկարծ թփից մի վարդ է պոկվում, ընկնում է պոչին:

Ճստիկ-Ճուտիկը վախեցած դուրս է փախչում: Վազում է վազում, հասնում է Հավիկ-Մարիկին:

- Վա՜յ, Հավիկ-Մարիկ, - կանչում է հեռվից, - երկինքը փուլ է գալիս:

- Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, էդ որտեղի՞ց իմացար, - հարցնում է Հավիկ-Մարիկը:

- Օ՜, ես իմ աչքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:

- Դե, արի փախչենք, - ասում է Հավիկ-Մարիկը:

Վազում են, վազում, հասնում են Բադիկ-Տատիկին:

- Վա՜յ, Բադիկ-Տատիկ, - կանչում է Հավիկ-Մարիկը, - երկինքը փուլ է գալիս:

- Ա՛ Հավիկ-Մարիկ, էդ որտեղի՞ց իմացար, - հարցնում է Բադիկ-Տատիկը:

- Ճստիկ-Ճուտիկն է ասում:

- Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Օ՜, ես իմ աչքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:

- Դե, եկեք փախչենք, - ասում է Բադիկ-Տատիկը:

Վազում են, վազում, հասնում են Սագիկ-Խաթունին:

- Վա՜յ, Սագիկ-Խաթուն, - կանչում է Բադիկ-Տատիկը, - երկինքը փուլ է գալիս:

- Ա՛ Բադիկ-Տատիկ, էդ որտեղի՞ց իմացար, - հարցնում է Սագիկ-Խաթունը:

- Հավիկ-Մարիկն է ասում:

- Ա՛ Հավիկ-Մարիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Ճստիկ- Ճուտիկն է ասում:

- Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Օ՜, ես իմ աչքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:

- Դե, եկեք փախչենք, - ասում է Սագիկ-Խաթունը:

Վազում են, վազում, հասնում են Հնդու-Թնդուին:

- Վա՜յ, Հնդու-Թնդու, - կանչում է Սագիկ-Խաթունը, - երկինքը փուլ է գալիս:

- Ա՛ Սագիկ-Խաթուն, էդ որտեղի՞ց իմացար, - հարցնում է Հնդու-Թնդուն:

- Բադիկ-Տատիկն է ասում:

- Ա՛ Բադիկ-Տատիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Հավիկ-Մարիկն է ասում:

- Ա՛ Հավիկ-Մարիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Ճստիկ- Ճուտիկն է ասում:

- Ա՛ Ճսիկ-Ճուտիկ, էդ որտեղի՞ց իմացար:

- Օ՜, ես իմ աչքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:

- Դե, եկեք փախչենք, - ասում է Հնդու-Թնդուն:

Վազում են, վազում, հասնում են Աղա-Աղվեսին:

- Աղա-Աղվե՜ս, Աղա-Աղվե՜ս,- կանչում է Հնդու-Թնդուն, երկինքը փուլ է գալիս:

- Ա՛ Հնդու-Թնդու, էդ որտեղի՞ց իմացար, - հարցնում է Աղա-

Աղվեսը:
- Սագիկ-Խաթունն է ասում:
- Ա՛ Սագիկ-Խաթուն, էդ որտեղի՞ց իմացար:
- Բադիկ-Տատիկն է ասում:
- Ա՛ Բադիկ-Տատիկ, էդ որտեղի՞ց իմացար:
- Ճստիկ-Ճուտիկն է ասում:
- Ա՛ Ճստիկ-Ճուտիկ, էդ որտեղի՞ց իմացար:
- Օ՜, ես իմ աչքովը տեսա, իմ ականջովը լսեցի, մի կտորն էլ դեռ պոչիս ընկավ:
- Էդ ի՞նչ եք ասում, - ասում է Աղա-Աղվեսը,- եկեք ձեզ տանեմ իմ տունը, որ երկինքը ձեր գլխին փուլ չգա:
Ճստիկ-Ճուտիկը, Հավիկ-Մարիկը, Բադիկ-Տատիկը, Սագիկ Խաթունը, Հնդու-Թնդուն բոլորը միասին ընկնում են Աղա-Աղվեսի ետեւից եւ մտնում են նրա որջը:
Մտնում են նրա որջը ու էն մտնելն էր, որ մտան, մինչեւ էսօր էլ դեռ չեն դուրս եկել:

Փոխադրությունը՝ Գ. Նազինյանի

ՀԱԶԱՐԱՆ ԲԼԲՈՒԼ

Հայկական ժողովրդական հեքիաթ

Լինում է, չի լինում՝ մի թագավոր, սա ունենում է երեք տղա: Օրերից մի օր թագավորը տղաներին ասում է, - Մեր տները հնացել են, բերեք նորոգենք:
Տղաները քանդում են տները, նորից շինում:
Թագավորը ժողովրդին հավաքում է, պալատները ցույց տալիս, հարցնում. - Լավ ե՞նք շինել:
Մարդիկ էս ու էն կողմից ասում են. - Շա՜տ լավ են, դրանց նմանը չկա:
Մի պառավ գալիս է ասում. - Թագավորն ապրած կենա, լավ եք շինել, համա մի բան պակաս է:
Պառավը որ ասում է «Մի բան պակաս է», թագավորը հրամայում է, - Քանդեցեք, նորը շինեցեք:
Էդ տները քանդում են: Նորից են շինում ուրիշ տեսակ, դրանից ավելի լավը:
Ժողովրդին հավաքում է, հարց ու փորձ անում՝ հավանում են:
Բայց էլի էն պառավը գալիս է, ասում. - Շատ լավ է շինված,

համա մի բան պակաս է:
Թագավորը էլի քանդել է տալիս, ասում, - Դե որ էդպես է, էն տեսակ շինեցեք, որ պակասություն չունենա:
Թագավորը երրորդ անգամ պալատները շինել է տալիս՝ մարմար քարերով, ամեն սարք ու կարգը տեղը, մի զարմանալու բան: Իր երկրում ինչքան մարդ կար՝ հավաքվում են, նայում, հիանում:
Պառավը գալիս է, ասում. - Թագավորն ապրած կենա, էլի մի բան պակաս է: Սրա միջին Հազարան բլբուլը պետք է ընի, որ հազար տեսակ ծլվլա ու երգի, խաղ ասի, խոսի, էն ժամանակ քո քեֆին քեֆ չի հասնի:
Թագավորը առավոտը իր նազիր-վեզիրին կանչում է, հրամայում. - Գնացե՛ք, Հազարան բլբուլը բերե՛ք:
Նազիր-վեզիրն ասում են. - Թագավորն ապրած կենա, մենք ո՛չ Հազարան բլբուլ լսել ենք, ո՛չ էլ տեսել, որտեղի՞ց գնանք բերենք:
Թագավորի երեք տղաներն առաջ են գալիս, ասում. - Ա՛յ հեր, մենք կգնանք Հազարան բլբուլը կբերենք:
Տղերքը ճամփա են ընկնում: Շատ են գնում, թե քիչ, շատ ու քիչը իրենք գիտեն, գնում են մի այգեպանի են պատահում: Դրա այգու կողքից երեք ճամփա էր գնում:
Այգեպանին հարցնում են. - Էս ճամփեքը ո՞ւր են տանում:
Ասում է. - Վերինը գնում է Բաքի, միջինը գնում է Շաքի, էս ներքին ճամփան էլ Գնացող - ետ չդարձողինն է:
Փոքր եղբայրը կարգադրում է, որ մեծ եղբայրը վերի ճամփով գնա, միջնեկը՝ միջին ճամփով, իսկ ինքը ներքին ճամփան է ընտրում:
Եղբայրներին ասում է. - Ախպերտի՛նք, գնում ենք, համա որս որ շուտ գանք, էստեղ՝ էս բաղմանչու մոտ կսպասենք, որ երեքս էլ միատեղ վեր կենանք, ետ գանք մեր տուն:
Էդտեղ բաժանվում են, ամեն մինը մի ճամփով գնում է: Մեծ եղբայրը գնում է դուրս գալիս մի քաղաք, միջնեկ եղբայրն էլ մի ուրիշ քաղաք, ինքն էլ Գնացող-ետ չդարձողի ճամփան բռնած գնում է, հա՛ գնում:
Շատ է գնում, թե՝ քիչ, ինքը գիտի, գնում է տեսնում մի Ծերունի մի մեծ պալատի դռանը նստած: Բարեւ է տալիս, անց կենում: Ծերունին պատասխան չի տալիս: Էդ տղան էլ նրա վրա

իսկի ուշք չի դարձնում, անց է կենում, գնում:

Ծերունին նոր նրա ետեւից ձեն է տալիս. - Ա՛յ տղա, ետ արի:

Գալիս է: Ծերունին հարցնում է. - Էդ ո՞ւր ես գնում:

- Գնում եմ Հազարան բլբուլը բերեմ:

- Հազարան բլբուլի պահապանը ես եմ: Տեսնում ես Գնացողետ չդարձողի ճամփան, ինչքան մարդ էս ճամփովը եկել է՝ ետ չի դարձել, բոլորին վնասել եմ: Համա քեզ շատ հավանեցի, պետք է օգնեմ: Լավ ականջ դիր, ինչ որ կասեմ՝ չըլնեմ-չիմանամ խոսքիցս դուրս գաս: Առ էս Քեչա-քյուլլահը: Որ գնաս Հազարան բլբուլի պալատը հասնես, էս Քեչա-քյուլլահը կդնես գլխիդ՝ էլ քեզ ոչ ոք չի տեսնի: Տուն կմտնես, Հազարան բլբուլը կվերցնես, կբերես, համա ուրիշ բանի ձեռ չտաս:

Տղան գնում է հասնում թագավորի պալատը,Քեչա-քյուլլահը դնում է գլխին, տուն մտնում ու մի պուճախում կանգնում: Թագավորը գալիս է պալատականներով, իրիկնահաց են բերում, սեղան բացում, ուտում-խմում:

Տղա ու աղջիկ իրար են անցնում, համ տղաներն են սպասարկում, համ աղջիկները: Հետո աղախինները թագավորին իր տեղում պառկեցնում են, իրենք վեր կենում, գնում:

Անցուդարձը որ հանդարտվում է, էն տղան տեսնում է, որ հրեն մի պսպղուն Խանչալ պատիցը կախ արած, վերցնում է կապում գոտուց: Հետո թագավորի ոսկի Չիբուխն է վերցնում, դնում ծոցը: Մոտենում է քնած թագավորին, տեսնում է սաթի Տերողորմեն կողքին ընկած, էն էլ է վերցնում, դնում ջեբը: Հետո Հազարան բլբուլը վերցնում ու ճամփա է ընկնում: Գալիս հասնում է էն Ծերունուն:

Տղան Ծերունուն հարցնում է. - Պատճառն ի՞նչ էր, որ դու էս ճամփով եկողներին բոլորին քո ձեռքով կորցրել ես, իսկ ինձ վնաս չտվիր, դեռ էլա ամեն բան էլ սովորեցրիր:

Ծերունին ասում է. - Դու որ եկար աներկյուղ «բարեւ» տվիր, անց կացար, իմ քեֆն էկավ, տեսա, որ դու սրտով տղա ես, դրա համար էլ քեզ ճամփա ցույց տվի ու ամեն բան սովորեցրի:

Հետո տղային հարցնում է. - Հո ուրիշ բան չվերցրի՞ր:

Տղան ասում է. - Չէ՛, մենակ Հազարան բլբուլն եմ բերել, մին էլ քո տված Քեչա- քյուլլահը: Ա՛ռ, ախպեր, քո Քեչա-քյուլլահը, շատ շնորհակալ եմ, որ դու ինձ էս մեծ լավությունն արիր:

Տղան Ծերունու ձեռքը համբուրում է, «մնաս բարով» ասում,

Հազարան բլբուլը վերցնում է ու ճամփա ընկնում:

Գալիս է հասնում այգեպանի մոտ, հարցնում է. - Ա՛յ այգեպան, իմ ախպորտանցից եկող չէլա՞վ:

Ասում է. - Չէ՛:

Տղան ասում է. - Քեռի՛, էս խանչալը քեզ նվեր, փետ կկտրես: Էս Հազարան բլբուլն էլ կպահես, ես գնում եմ ախպորտանցս գտնելու, մինչեւ իմ ետ գալը Հազարան բլբուլը քեզ ամանաթ:

Տղան միջի ճամփան բռնում է ու գնում: Գնում հասնում է մի քաղաք, տեսնում է միջնեկ եղբայրը մի փալան շալակին համբալություն է անում: Մի ծանր պարկի տակ տնքալով, չոքին-պոկին անելով տանում է:

Եղբորն ասում է. - Ա՛յ տղա, էդ ի՞նչ բանի ես, թագավորի կարողությունը հատացրել, համբալություն ես անում: Վեր գցի՛ էդ ջվալն ու ետեւիցս արի:

Եղբորը տանում է, նոր շորեր առնում, հագցնում՝ ոտ ու գլուխը նորոգում: Գալիս են քաղաքի ծայրին մի խանութում հաց են ուտում: Դուրս գալու ժամանակ տղան խանութպանին հարցնում է. - Ի՞նչ պիտի տանք:

- Հինգ մանեթ. - ասում է խանութպանը:

Տղան սաթի Տերողորմեն հանում է տալիս խանութպանին, ասում. - Ա՛ռ, հինգ մանեթի տեղ քեզ ամանաթ, որ փողը բերինք՝ Տերողորմեն ետ կտաս:

Սա էլ վերցնում է Տերողորմեն, պատից կախ անում:

Եղբոր հետ գալիս է այգեպանի մոտ, ասում է. - Էս ախպորս Հազարան բլբուլի հետ կպահես, մինչեւ գնամ մեկել ախպորս գտնեմ, բերեմ:

Ընկնում է վերին ճամփան, մեծ եղբոր ետեւից գնում: Գնում է մի քաղաք մտնում, տեսնում է մեծ եղբայրը երկու էշ առաջին արած՝ աղբը բարձած գալիս է: Սա էլ եկել էր մի այգեպանի մոտ մշակ վարձվել, մենակ մի վերնաշապիկ կար հագին, քամին որ փչում էր, փեշերը ետ տանում, թեւ ու թիկունքը բացվում էր:

Եղբորը ասում է. - Դու թագավորի մեծ տղեն ըլնես ու էդ օրո՞ւմ: Թո՛ղ էշերը ու ետեւիցս արի:

Ախպորը վերցնում է, նոր շորեր առնում, հագցնում, տանում է մի հյուրատուն, լավ ուտեցնում, խմեցնում: Դուրս գալու ժամանակ տանտիրոջը հարցնում է.

- Ի՞նչ պիտի տամ:

- Հինգ մանեթ. - ասում է տանտերը:

- Առ էս Չիբուխը, երբ որ քո փողը կորկեմ, Չիբուխը ետ կտաս:

Էն մարդն էլ ասում է՝ լա՛վ: Վերցնում է Չիբուխը, պատիցը կախ անում:

Տղան մեծ ախպորն էլ առնում, գալիս է այգեպանի մոտ: Երեք եղբայրները միանում են, Հազարան բլբուլը վերցնում ու ճամփա ընկնում:

Գալիս են, գալիս, շատն ու քիչը իրենք գիտեն, ճամփին փոքր եղբայրը ետ է մնում: Էս մեծ ու միջնեկ եղբայրները գալիս են հասնում մի ջրհորի, խալիչեն գցում են հորի բերանին ու ամեն մեկը մի ծայրին նստում:

Փոքր եղբայրը բեզարած, հոգնած գալիս է հասնում նրանց: Ասում են. - Ա՛յ ախպեր ջան, արի՛, արի՛, նստի՝ դինջացի:

Նա գալիս է մեջտեղը նստում: Եղբայրները վեր են կենում թե չէ, նա խալիչեն տակին ընկնում է ջրհորը:

Ասում են. - Խալիչեն մեզ տուր, քեզ էդտեղից հանենք:

Ասում է. - Որ դուք հանող լինեիք, ինձ էս հորը չէիք գցի, առե՛ք ձեր խալիչեն, գնացե՛ք, կորե՛ք:

Եղբայրները գալիս են տուն հասնում: Հազարան բլբուլը տալիս են իրենց հորը: Հայրն էլ վերցնում է Հազարան բլբուլը, կախ անում պատից: Ի՛նչ անում, չեն անում՝ Հազարան բլբուլը չի երգում, ձեն չի հանում:

Սրանց թողնենք էստեղ, լուր տանք փոքր եղբորից: Մի վաճառական է գալիս էդ ջրհորի գլխին կանգնում, քարավանը տանելիս միշտ էդտեղից ջուր է վերցնում: Ուզում է, որ ջուր հանի, տեսնում է ջրհորում մի մարդ կա: Պարանը կախում է դուրս հանում, տեսնում է մի սիրուն, շնորհքով տղա, ասում է. - Ա՛յ տղա, էստեղ ի՞նչ ես շինում:

- Գիշերը ճամփա էի գալիս, մթնագիշեր էր, եկա ու հանկարծ ընկա էս հորի մեջ:

Վաճառականն ասում է. - Ա՛յ որդի, ես զավակ չունեմ, դու կըլնես իմ տղան:

Վաճառականը նրան որդեգրում է ու տանում գործի դնում իր խանութում: Էս տղան սկսում է իրեն համար կարգին առեւտուր անել:

Հիմի էլ լուր տանք Հազարան բլբուլի տեր թագավորից: Թագավորը առավոտը վեր է կենում տեսնում Խանչալը չկա, Չիբուխը չկա, Տերողորմեն չկա, Հազարան բլբուլը չկա, կանչում է նազիր-վեզիրին, հրամայում, որ կռվի պատրաստություն տեսնեն:

Զորքը հավաքում են ու ճամփա ընկնում: Գալիս են հասնում Ծերունու մոտ:

Թագավորն ասում է. - Էսքան ժամանակ ինձ պահպանել ես, էս ո՞նց է պատահել, որ հիմի իմ ունեցվածքը թալանել ես տվել:

Հալիվորն ասում է. - Թագավորն ապրած կենա, քու աշխարհի չորս կողմովը ճամփա կա, բալքի ուրիշ ճամփով են տարել, ես ի՞նչ իմանամ:

Թագավորն իրեն զորքով հասնում է այգեպանին: Տեսնում են այգեպանը թագավորի Խանչալը ձեռին փայտ է կտրում, ծայրերն էլ սրում:

Նազիր-վեզիրը այգեպանին ծեծում են, ասում.

- Էս Խանչալը քեզ որտեղի՞ց, ո՞վ է տվել քեզ:

-Ախպե՛ր, - ասում է,- ինձ ինչի՞ եք սպանում, թողեք ասեմ, մի տղա բերեց ինձ տվեց ու ինքը գնաց, ես էլ աղքատ մարդ եմ, ցաքատս կոտրել է, կացին էլ չունեմ, էս խանչալով փետ եմ կտրում:

Թագավորը հարցնում է. - Խանչալի գինն ի՞նչ է:

- Հինգ մանեթ. - պատասխանում է այգեպանը:

Թագավորը հանում է հինգ մանեթը տալիս այգեպանին, Խանչալը վերցնում, հետո հարցնում է, թե. - էն տղեն ո՞ւր գնաց:

Այգեպանն ասում է. - Էս միջի ճամփովը գնաց:

Թագավորը զորքը քշում է, էն միջի ճամփան բռնում՝ գնում հասնում է մի քաղաք, մտնում է էն խանութը, որտեղ որ թագավորի տղաները հաց էին կերել: Տեսնում է իր Տերողորմեն էնտեղ կախ արած, հարցնում է. - Դրա գինն ի՞նչ է:

Խանութպանն ասում է. - Հինգ մանեթ:

Հանում է հինգ մանեթը տալիս, Տերողորմեն վերցնում, ետ գալիս այգեպանի մոտ, հարցնում, - էն տղեն հետո ո՞ւր գնաց:

- Էս վերի ճամփով գնաց:

Վերի ճամփով գնում են, հասնում էն քաղաքը, էն հյուրատունը, որտեղ թագավորի տղաները հաց էին կերել, հանգստացել: Մտնում են հյուրատուն՝ հաց ուտելու, տեսնում են թագավորի Չիբուխը էնտեղ կախ արած:

Թագավորը հարցնում է.- Էս Չիբուխի գինն ի՞նչ է:

- Հինգ մանեթ. - ասում է տանտերը:

Հինգ մանեթը տալիս է, Չիբուխը վերցնում ու ետ դառնում:

Գալիս են նորից այգեպանի մոտ, հարցնում, թե՝ էն տղեն հետո ո՞ւր գնաց:

Այգեպանը ճանփան ցույց է տալիս: Հազարան բլբուլի տեր թագավորը զորքով գալիս հասնում է է՛ն քաղաքը, որտեղ Հազարան բլբուլն էր: Լուր է տալիս էդ երկրի թագավորին. - Հազարան բլբուլը ղրկի, թե չէ քաղաքդ տակն ու վրա եմ անում:

Թագավորը տղաներին կանչում է, ասում. - Որդի՛ք, Հազարան բլբուլի տերը եկել է՝ Հազարան բլբուլը ուզում է, գնացեք պատասխան տվեք:

Տղաները վեր են կենում, գալիս Հազարան բլբուլի տիրոջ մոտ, ասում են. - Հազարան բլբուլը մենք ենք բերել:

- Ո՞նց եք բերել, - հարցնում է թագավորը:

Ասում են, - Տուն մտանք, վերցրինք բերինք:

Հազարան բլբուլի տերն ասում է. - Սուտ եք ասում, Հազարան բլբուլը դուք չեք բերել, գնացեք աչքիցս հեռացեք: - Ասում է ու ծեծելով վռնդում:

Թագավորի տղաները ամոթով ետ են գնում:

Հազարան բլբուլի տերը նորից է լուր տալիս թագավորին. - Իմ Հազարան բլբուլը ղրկի, թե չէ քաղաքդ տակն ու վրա եմ անում:

Լուրը գնում, հասնում է վաճառականի տղային:

Սա հորն ասում է, - Ապի՛, արի գնանք տեսնենք էդ ինչ բան է:

- Ա՛յ որդի, - ասում է, - ինչի՞դ է պետք, քո բանին կաց:

- Չէ՛, - ասում է, - ապի, գնա՛նք, բալքի ձեռներիցս մի բան է գալիս:

Հայր ու տղա գնում են թագավորի մոտ:

Տղան ասում է. - Թագավորն ապրած կենա, ինձ ի՞նչ կտաս, որ Հազարան բլբուլի տիրոջը էստեղից հեռացնեմ:

-Ի՛նչ կուզես՝ կտամ, - պատասխանում է թագավորը:

Էդ տղան գալիս է Հազարան բլբուլի տիրոջ մոտ ու ասում. - Թագավորն ապրած կենա, ի՞նչի ես եկել ժողովրդին լեղաճաք անում: Հազարան բլբուլ բերողը մի մարդ կըլի: Հիմի էս սաղ քաղաքն ի՞նչ մեղավոր է, որ ուզում ես տակն ու վրա անես: Քո Հազարան բլբուլը ես եմ բերել, ինչ ուզում ես արա ինձ:

- Ո՞նց բերեցիր. - հարցնում է բլբուլի տերը:

- Ես Գնացող-ետ չդարձող ճամփով եկա, տեսա՝ ճամփի կողքին մի պալատ, մոտը մի Ծերունի նստած: «Բարով» տվի անց կացա, նա ինձ ետ կանչեց. «Ո՞ւր ես գնում»: Ասի. «Գնում եմ Հազարան բլբուլը բերեմ»: Ծերունին ինձ մի Քեչա-քյուլլահ տվեց: Գլխիս դրի, մտա քու պալատը: Իրիկնահացը կերա, քնեցի: Վեր կացա Խանչալդ, Չիբուխդ, Տերողորմեդ ու Հազարան բլբուլդ վեր կալա ու եկա Ծերունու մոտ: Քեչա-քյուլլահը ետ տվի, հարցրեց. «Հո ուրիշ բան չվերցրի՞ր»: Ասի. «Չէ՛, մենակ Հազարան բլբուլն եմ բերել»:

Հազարան բլբուլի տերը տեսնում է, որ ամեն բան էդ տղան տեղը-տեղին պատմեց, ասում է, - Էդ բոլորը ճիշտ ես ասում, իմ Հազարան բլբուլը բերողը դու ես: Հիմի ես ու դու պիտի կռիվ անենք, թե դու հաղթեցիր՝ Հազարան բլբուլը քոնն է, թե ես հաղթեցի՝ գլուխդ կտրելու եմ ու Հազարան բլբուլը տանեմ:

Սրանք կռիվ են բռնում: Էդ տղան Հազարան բլբուլի տիրոջը վեր է գցում ու բկին չոքում: Հազարան բլբուլի տերն ասում է. - Ա՛յ տղա, ինձ ձեռ մի տալ, ես աղջիկ եմ, ես ուխտ էի արել, ով որ ինձ հաղթի՝ նրան ուզեմ: Էս ալամ աշխարհքում մենակ դու էիր, որ ինձ հաղթեցիր, սրանից հետո դու իմն ես, ես՝ քոնը:

Սրանք վեր են կենում, իրար ձեռք բռնած գնում են թագավորի պալատը: Հենց պալատ են մտնում, Հազարան բլբուլը խոսում է, ծլվլում, երգում:

Թագավորն ասում է. - Էս ի՞նչ բան է, Հազարան բլբուլը խոսեց:

Տղան ասում է. - Հալբաթ կխոսա, համ տերն է էստեղ, համ բերողը: Բերողը ես եմ, քո պուճուր տղան: Ու պատմում է ամբողջ եղելությունը:

Թագավորն էդ ռոպեին հրամայում է մեծ ու միջնեկ տղաներին հեռացնել իր երկրից: Բերում է փոքր տղային ու էդ աղջկան փառքով-պատվով պսակում, հարսանիք անում:

Նրանք հասնում են իրենց փափագին, դուք էլ հասնեք ձեր փափագին:



Առաստաղը բաց անեմ,
Առանց կրակ հաց հանեմ:
(փեքակ)

Պոչից բռնեմ,
Արդար կանչի:
(կշեռք)

Անվարել բուսնում է,
Հնձում ես՝ չի ուտվում:
(մազ)

Պզտիկ եմ, պզտիկ եմ,
Աշխարհը մեջս տեղ կանի:
(աչքեր)

Պստիկ սիրուն տուն ունեմ,
Մեջը հազար սյուն ունեմ:
(բերան)

Քույր ու եղբայր են.
Մինն առավոտն է ծնվում,
երեկոյան մեռնում,
Մյուսը՝ երեկոյան ծնվում է՝
առավոտը մեռնում:
(լուսին, արեւ)

Ինչ որ ասենք՝ մեջն է լցվում:
(ականջ)

Ինքը երկար,
Պոչն իրենից երկար:
(աղվես)

Էն ինչ քաղաք է,
Դուրսը արծաթ է, ներսը՝ ոսկի,
Որ քարով տաս՝ կքանդվի,
Էլ չի շինվի:
(ձու)

Մայրս ալյուր մաղեց,
լեռ, դաշտ պատեց:
(ձյուն)

Լարը քաշեմ,
Սարը շարժեմ:
(ուղղ)

Էն ինչն է,
Միշտ բերանիդ մեջ է,
Բայց կուլ չես տալիս:
(լեզու)

Քար եմ, բայց քար չեմ,
Արեւ կպավ՝ կհալչեմ:
(սառույց)

Էն ի՞նչն է, ի՞նչը,
Քիթը՝ ոսկորից,
Մորուքը՝ մսից:
(աքլոր)

Սեւ սատանեն բեղն օլորեց,
Հազար-հազար մարդ գլորեց:
(գիշեր)

Ծամում եմ՝ չի ծամվում,
Անծամել կուլ եմ տալիս:
(ջուր)

Ուլուլիկ, պուլուլիկ,
Մեջը լիքը կարմիր ուլնիկ:
(նուռ)

Առանց ոտքի,
Առանց ձեռքի
Դռներ է բացում:
(քամի)

ԱՌԱԾԱՆԻ

1. Գառն ու գելը որ մի ձորում հանդիպեցին, վայ գառի հալին:

2. Սոված հավը երազում կուտ է տեսնում:

3. Գործը էգուցվան մնաց, իմացի՝ կորավ գնաց:

4. Շատ լսիր, քիչ խոսիր:

5. Հասկացողին մին ասա, չհասկացողին՝ հազար ու մին:

6. Սուտասանի տունը կրակ ընկավ, ոչ ոք չհավատաց:

7. Շները կռվեցին, անցորդի բանն հաջողեց:

8. Ես աղա, դու աղա, բա մեր աղունն ո՞վ աղա:

9. Գործն արա ինձ համար, սովորիր քեզ համար:

ՄԿԱՆ ԹԱԿԱՐԴ

(Ժողովրդական խաղեր)

***

Էկե դուկե տըմըզա,
Չալան չուկե պուպուզա,
Մախտե կոճակ,
Դան պլոճակ,
Ճան-ճուկ:

***

Բութմատն ասաց՝ գայլը եկավ:
Ցուցամատն ասաց՝ որտեղի՞ց եկավ:
Միջնամատն ասաց՝ սարից եկավ:
Մատնեմատն ասաց՝ եկեք փախչենք:
Ճկույթն ասաց՝ պստլիկ եմ,
Ճստլիկ եմ,
Ոտիկ չունեմ,
Թեւիկ չունեմ,
Ինչպե՞ս փախչեմ:

ՃՎԻԿ-ՃՎԻԿ

Ճվի՜կ-ճվի՜կ,
Ակնաճվիկ,
Կարմիր բաղիկ,
Նախշուն թեւիկ,
Թռնի գնա հեռու քաղաք,
Մեզ բուրդ բերի ու շատ բամբակ,

Գուլպա գործենք,
Գլխարկ գործենք,
Խորոտ բալի գլխին կործենք:
Թը՜ռ, ճնճուղիիի՜կ:

***

Ճկույթն ասաց՝ ա՛յ քույրիկներ, ջա՛ն քույրիկներ, սոված եմ.
Մատնեմատն ասաց՝ հաց ուտենք,
Միջնամատն ասաց՝ որտեղի՞ց ուտենք,
Ցուցամատն ասաց՝ գնանք ճարենք,
Բութմատն ասաց՝ գողանանք ուտենք:

Ծափի՜ն, ծափի՜ն, թափ նաներով,
Փըլավ կեփեմ պուտկներով,
Գդալ չկա, լավաշ չկա՝
Մենք էլ կուտենք մատիկներով:

ԻՆՉՊԵ՞Ս ԿՈՒՏԵՍ

(ժողովրդական)

- Փիսիկ, ա՛յ փիսիկ,
Այդ ի՞նչ ես տանում:
- Կարագ ու մեղր:
- Ի՞նչ ես անելու:
- Ես պիտի ուտեմ:
- Իսկ ինչո՞վ կուտես:
- Անպոչ գդալով:
- Գդալդ ո՞ւր է:
- Վա՜յ, վա՜յ, կորել է:
- Բա ինչպե՞ս կուտես:
- Այսպե՜ս, թաթիկով,
Պնչով, քթիկո՜վ:

***

Ծուղրուղո՜ւ, սանամեր,
Էն մեկ հավք կար, ո՞ւր գնաց,
- Ծարավ աղբրում կուլ գնաց:
-Ի՞նչ կար կտցում:
- Չիր ու չամիչ:
- Ո՞ւր էր տանում:

- Հարս ու փեսին:
- Ոսկե թախտին:
- Ի՞նչ էր եփում:
- Համով կորկոտ:
- Ո՞ւր էր դրել:
- Բաց պատուհան:
- Ո՞վ է կերել:
- Սեւ փիշիկը:
- Ա՛յ սեւ փիշիկ, վա՜յ սեւ փիշիկ,
Քո մերն ուտի քո թշիկ:

ԱՓ ՈՒ ՊՏՂՈՒՆՑ

Իրար դիմաց նստելով՝ խաղացողները մրցում են հետեւյալ ձեւով: Խաղացողը բաց է անում ձախ ափը եւ աջ ձեռքի մատները պտղունց ձեւացնելով՝ հենում է ձախ ափամիջին:Հետո բացում է աջ ափը եւ ձախն է պտղունց անում ու հպում աջ ափամիջին, անսխալ կարգով գործողությունը կատարվում է ակնթարթային արագությամբ, մերթ մեկ, մերթ մյուս խաղացողի կողմից:

ՄՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Երեխաներից մեկը ընտրվում է մուկ, մյուսը՝ կատու: Երկուսի աչքերը թաշկինակով կապում են, թեեւ երբեմն մկանը բաց են թողնում: Մուկը, ձեռքն առնելով 2 փոքրիկ քար, միմյանց է խփում ու վազում այս ու այն կողմ: Կատուն այդ չխկչխկոցի միջոցով հետեւում է նրան՝ աշխատելով բռնել: Երբ հաջողեցնում է, դերերը փոխում են:

ՃՆՃՂՈՒԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Գետնին 5-6 մ տրամագծով շրջան են գծում: Խաղացողներից մեկին «կատու» են նշանակում, որը կանգնում է շրջանագծի մեջ: Մնացածները ճնճղուկներն են, որոնք կանգնում են շրջանից դուրս: Խաղը սկսելուց հետո ճնճղուկները թռչկոտելով մտնում են շրջան եւ դուրս գալիս, իսկ կատուն նրանցից մեկին շրջանի մեջ պետք է բռնի:

Խաղի կանոնները.

1. Կատուն ճնճղուկներին պետք է բռնի միայն շրջանի մեջ:
2. Ճնճղուկները շրջանի մեջ եւ նրանից դուրս թռչկոտում են մեկ կամ երկու ոտքով:

ՄԿԱՆ ԹԱԿԱՐԴ

Խաղացողները բաժանվում են երկու խմբի: Մի խումբը (կատուները) շրջան է կազմում, իսկ մյուս խումբը (մկները) ցրվում է: Կատուները կազմում են շրջան- թակարդ եւ արտասանում.

Ա՜խ, որքան ձանձրալի են այս մկները, Կրծոտել են ու լափել եղած ողջ կերը, Որտեղ նայես՝ մկներ են ճստիկ, Բազմացել են ու տարածվել սաստիկ: Մենք էլ հիմա թակարդ կդնենք Ու էս մկներին տեղում կբռնենք:

Վերջին 2 տողերն արտասանելիս կատուները բարձրացնում են ձեռքերը, եւ մկները սկսում են վազվզել շրջանից ներս ու դուրս: Խաղավարի ազդանշանով կատուները ձեռքերն իջեցնում են եւ կքանստում:

Այնուհետեւ խմբերը տեղերը փոխում են: Վերջում հաշվում են արդյունքները, որ խումբը շատ մկներ է բռնել, հաղթում է:

Խաղի կանոնները.

1. Թակարդը փակվում է ազդանշանից հետո:
2. Թակարդում մնացածները այն ճեղքելով անցնելու իրավունք չունեն:

ԹՁՈՒԿՆԵՐ ԵՎ ՀՍԿԱՆԵՐ

Խաղացողները կանգնում են շրջանով: Երբ խաղավարը ասում է՝ հսկաներ, բոլորը բարձրանում են ոտնաթաթերին եւ ձեռքերը բարձրացնում վեր, իսկ եթե ասում է՝ թզուկներ, կքանստում են՝ ձեռքերը տարածելով առաջ:

Մի քանի անգամ խաղալուց հետո, խաղավարը «խառնում» է շարժումները, այսինքն՝ «հսկաներ» ասելիս ինքը կքանստում է, իսկ «թզուկների» ժամանակ բարձրանում ոտնաթաթերին՝ ձեռքերը վեր բարձրացնելով: Սա արվում է երեխաներին շփոթեցնելու եւ խաղն աշխուժացնելու համար: Խաղացողները պետք է ճիշտ կատարեն խաղավարի հրահանգները եւ ոչ թե հետեւեն շարժումներին:

ԿԱՏՈՒՆ ԵԿԱՎ

Դահլիճի մի անկյունում գտնվում է «կատվի տունը», իսկ «մկները» ցրվում են դահլիճում, պարում, կատարում տարբեր շարժումներ: Խաղավարի «կատուն եկավ» ազդանշանից հետո մկները սսկվում են: Կատուն դուրս է գալիս «տնից», հետեւում մկներին եւ, ով մի փոքր շարժում է կատարում, նրան բռնում եւ «տուն» է տանում: Խաղավարի «կատուն գնաց» ազդանշանից հետո կատուն վերադառնում է տուն, իսկ մկները շարունակում են պարել, վազվզել: Մի քանի մուկ բռնելուց հետո փոխում են կատվին:

Խաղի կանոնները.

1. Երբ կատուն մտնում է խաղահրապարակ, մկներին չի թույլատրվում շարժվել: Այնպես պիտի շարժվեն, որ կատուն չնկատի:

ՃԱՆԱՉԻՐ ԴՐՈՇԱԿԴ

Խաղացողները բաժանվում են 3 խմբի եւ շրջաններ կազմում: Յուրաքանչյուր խմբի ավագը կանգնում է շրջանի մեջտեղում՝ ձեռքին դրոշակ: 3 դրոշակն էլ տարբեր գույնի են: Խաղավարի «ցրվիր» հրահանգով բոլոր խաղացողները, բացի ավագներից, ազատ թռվռում, վազվզում են այս ու այն կողմ: «Փակել աչքերը» հրահանգով բոլորը փակում են աչքերը: Այդ ժամանակ ավագները փոխում են դրոշակները: «Գտիր դրոշակդ» հրահանգով բոլոր խաղացողները շրջան են կազմում իրենց դրոշակի շուրջը: Որ խումբը շուտ է գտնում իր դրոշակը եւ նրա շուրջ շրջան կազմում՝ նա էլ հաղթում է:

Խաղի կանոնները.

1. Ավագները փոխում են դրոշակները եւ ոչ թե տեղերը:
2. Խաղացողները շրջապատում են այն ավագին, որի մոտ գտնվում է իրենց դրոշակը:

ԾՈՎՆ ԱԼԵԿՈԾՎՈՒՄ Է

Բոլոր խաղացողները կազմում են մեծ շրջան: Խաղավարը դուրս է գալիս շրջանից, շրջում եւ, մոտենալով առանձին խաղացողների, ասում՝ ծովն ալեկոծվում է: Ում որ ասում է, նա պետք է հետեւի խաղավարին: Այսպիսով, բոլորը գնում են խաղավարի հետեւից, կատարելով այն շարժումները, ինչ որ կատարում է նա: Նա կարող է ցատկել, պարել, վազել: «Ծովը հանդարտվեց» հրահանգից հետո բոլորը արագ վազում եւ կանգնում են իրենց տեղերում:

Խաղի կանոնները.

1. Պետք է կատարել խաղավարի բոլորը շարժումները:
2. Պետք է ընտրել հնարագետ խաղավարի, որպեսզի խաղն անցնի հետաքրքիր եւ աշխույժ:
3. Խաղավարին տարբերելու համար նրա գլխին թղթե մեծ գլխարկ են դնում:

ԵՐԿՈՒ ՍԱՌՆԱՄԱՆԻՔ

Դահլիճի 2 կողմում 2 «տուն» է գտնվում: Խաղացողները հավաքվում են մի տան մեջ, իսկ նրանցից երկուսը՝ «սառնամանիքները», կանգնում են 2 տան մեջտեղում: «Սառնամանիքները» միասին դիմում են երեխաներին.

«Երկու եղբայր ենք պատանի, Սառնամանիք անվանի»:

I սառնամանիք. Սառնամանիքն եմ կարմրաքիթ:

II սառնամանիք. Ես էլ նույնը, բայց՝ կապտաքիթ:

Ով ձեզանից սիրտ կանի, Թող գլուխը դուրս հանի: Երեխաները պատասխանում են.

Չենք վախենում ձեզանից:

Այս ասելուց հետո երեխաները վազում են դեպի մյուս տունը: Սառնամանիքները ում որտեղ բռնում են, ցրտահարում են: Ցրտահարվածը էլ չի կարող տուն հասնել, կանգնում է անշարժ: Վազողները ցրտահարվածներին կարող են ազատել՝ նրանց ձեռք տալով:

ԹՌՉՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՆԴԱԿԸ

Խաղացողները բաժանվում են 2 հավասար խմբի: Խմբերից մեկը կազմում է շրջան՝ «վանդակ», իսկ մյուս խումբը՝ «թռչունները», գտնվում են վանդակից դուրս:

Որեւէ ազդանշանով (ծափով, երաժշտությամբ) վանդակ կազմած խաղացողները ձեռքերը բարձրացնում են վեր, իսկ թռչունները մտնում են վանդակ եւ դուրս գալիս: Երաժշտության հանկարծակի ավարտումով շրջանում կանգնած երեխաները ձեռքերը իջեցնում եւ կքանստում են՝ փակելով վանդակը: Այնուհետեւ խմբերը դերերը փոխում են:

ՈՒՐԱԽ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Խաղացողներից մեկին ընտրում են խաղավար, մյուսները, զույգ կազմելով, կանգնում են 2 սյունաշարով: Խաղավարը գտնվում է շարքի առջեւում: Երեխաներն արտասանում են.

Մենք ուրախ երեխաներ ենք, Սիրում ենք վազել, սիրում ենք խաղալ, Թե կարող ես՝ շտապիր, Վազող զույգին շուտ բռնիր:

Այս ասելուց հետո, վերջին զույգը կազմող երեխաներից մեկը աջ է վազում, մյուսը՝ ձախ, աշխատում են հասնել իրար ձեռքերը բռնել: Իսկ եթե խաղավարին հաջողվում է բռնել նրանցից մեկնումեկին դեռ զույգ չկազմած, այդ դեպքում բռնվողը դառնում է խաղավար: Իսկ նախորդ խաղավարը զույգ է կազմում այն խաղացողի հետ, որին չէր բռնել:

ԱՍԵՂ, ԹԵԼ, ՀԱՆԳՈՒՅՑ

Խաղացողները իրար ձեռքից բռնած շրջան են կազմում: Խաղացողներից երեք հոգի առանձնացվում են, որոնցից մեկը «ասեղն» է, մյուսը՝ «թելը», երրորդը՝ «հանգույցը»: Նրանք կանգնում են շրջանից դուրս, իրար ետեւից՝ ասեղը, թելը, հանգույցը:

Ղեկավարի ազդանշանով ասեղը վազում է, նրա ետեւից՝ թելն ու հանգույցը: Որտեղից անցնի ասեղը, այնտեղով էլ պետք է անցնեն թելն ու հանգույցը:

Խաղավար ասեղի դերում պետք է ընտրել ճարպիկ, հնարագետ երեխաների:

Շրջան կազմող երեխաները պետք է ձեռքերը վեր պահեն եւ չխանգարեն խաղավարներին:

ՀԻՆԳ ԱՅԾԱՏԵՐ

Խաղում է 5-10 երեխա: Նրանք, առանց իրար ձեռք բռնելու, շրջան են կազմում: Մեկը ձեւանում է 1, երկրորդը՝ 3, երրորդը՝ 5 այծի տեր, ապա հաջորդաբար 7, 10, 15: Նրանցից յուրաքանչյուրը պետք է հիշի իր այծերի թիվը:

Խաղն սկսելիս խաղակիցներից մեկը հայտարարում է.

- Գյուղին հարկ է եկել, ո՞վ պիտի տա:

- Թող երեք այծատերը տա, - պատասխանում է մյուսը:

- Հաշվիր գյուղի վրա, թող գյուղը տա, երեք այծատերն ինչո՞ւ տա, - վրա է տալիս երեք այծատերը:

- Գյուղն ինչո՞ւ տա, թող 5 այծատերը տա, - ասում է հաջորդը:

5 այծատերը անմիջապես վրա է բերում.

- Ինչո՞ւ 5 այծատերը, թող 15 այծատերը տա:

Խաղն այսպես շարունակվում է այնքան, մինչեւ մեկը շփոթվում է: Պարտվողը խաղից դուրս է գալիս կամ որեւէ «պատիժ» է ստանում:

ԵՐԳԱՐԱՆ

ԱՐԵՎ, ԱՐԵՎ



Արե՛ւ, արե՛ւ, արի դուս,
Քեզ բերել ենք աչքի լուս,
Քո քուրիկը՝ Լուսընկան,
Բերեց չամիչ մեկ աման,
Ամպը եկավ մուք արավ,
Չամիչն աչքերես կորավ:
Բաց երեսդ, արեգակ,
Մի բուռ չամիչ քեզ կըտանք:

Օ՜խ, արեւին խաբեցինք,
Օ՜խ, արեւին խաբեցինք,
Օ՜խ, արեւին խաբեցինք,
Ամպի տակեն հանեցինք,
Ամպի տակեն հանեցինք:

ԱՍԵՂ, ԹԵԼ, ՀԱՆԳՈՒՅՑ

Խաղացողները իրար ձեռքից բռնած շրջան են կազմում: Խաղացողներից երեք հոգի առանձնացվում են, որոնցից մեկը «ասեղն» է, մյուսը՝ «թելը», երրորդը՝ «հանգույցը»: Նրանք կանգնում են շրջանից դուրս, իրար ետեւից՝ ասեղը, թելը, հանգույցը:

Ղեկավարի ազդանշանով ասեղը վազում է, նրա ետեւից՝ թելն ու հանգույցը: Որտեղից անցնի ասեղը, այնտեղով էլ պետք է անցնեն թելն ու հանգույցը:

Խաղավար ասեղի դերում պետք է ընտրել ճարպիկ, հնարագետ երեխաների:

Շրջան կազմող երեխաները պետք է ձեռքերը վեր պահեն եւ չխանգարեն խաղավարներին:

ՀԻՆԳ ԱՅԾԱՏԵՐ

Խաղում է 5-10 երեխա: Նրանք, առանց իրար ձեռք բռնելու, շրջան են կազմում: Մեկը ձեւանում է 1, երկրորդը՝ 3, երրորդը՝ 5 այծի տեր, ապա հաջորդաբար 7, 10, 15: Նրանցից յուրաքանչյուրը պետք է հիշի իր այծերի թիվը:

Խաղն սկսելիս խաղակիցներից մեկը հայտարարում է.

- Գյուղին հարկ է եկել, ո՞վ պիտի տա:

- Թող երեք այծատերը տա, - պատասխանում է մյուսը:

- Հաշվիր գյուղի վրա, թող գյուղը տա, երեք այծատերն ինչո՞ւ տա, - վրա է տալիս երեք այծատերը:

- Գյուղն ինչո՞ւ տա, թող 5 այծատերը տա, - ասում է հաջորդը:

5 այծատերը անմիջապես վրա է բերում.

- Ինչո՞ւ 5 այծատերը, թող 15 այծատերը տա:

Խաղն այսպես շարունակվում է այնքան, մինչեւ մեկը շփոթվում է: Պարտվողը խաղից դուրս է գալիս կամ որեւէ «պատիժ» է ստանում:

ԵՐԳԱՐԱՆ

ԱՐԵՎ, ԱՐԵՎ



Ա-րե՛ւ, ա-րե՛ւ, ա-րի դուս, քեզ բե-րել ենք աչ-քի լուս,
քո քու-րի-կը՝ Լուս-ըն-կան, բե-րեց չա-միչ մեկ ա-ման,
Ամ-պը ե-կավ մուք ա-բաւ, չա-միչն աչ-քե-րես կո-բաւ:
Բաց ե-րե-սըդ, ա-րե-գակ, մի բուռ չա-միչ քեզ կը-տանք:



Օ՜խ, ա-րե-ւին խա-բե-ցինք, օ՜խ, ա-րե-ւին խա-բե-ցինք,



օ՜խ, ա-րե-ւին խա-բե-ցինք, ամ-պի տակ-են հա-նե-ցինք:



ամ-պի տակ-են հա-նե-ցինք:

Արե՛ւ, արե՛ւ, արի դուս,
Քեզ բերել ենք աչքի լուս,
Քո քուրիկը՝ Լուսընկան,
Բերեց չամիչ մեկ աման,
Ամպը եկավ մուք արավ,
Չամիչն աչքերես կորավ:
Բաց երեսդ, արեգակ,
Մի բուռ չամիչ քեզ կըտանք:

Օ՜խ, արեւին խաբեցինք,
Օ՜խ, արեւին խաբեցինք,
Օ՜խ, արեւին խաբեցինք,
Ամպի տակեն հանեցինք,
Ամպի տակեն հանեցինք:

ՀՈ՛Պ ԹՌԻ

Կայտառ



Խնձոր ես ծառի վրա,
Հայկո ջան,
Ծաղիկ ես սարի վրա,
Վարսո ջան,
Հո՛պ թըռի, հո՛պ, հո՛պ թըռի,
Հայկո ջան,
Շուտ, թըռի,շախով թըռի,
Վարսո ջան:

Անուշ տաղ ասող բլբուլ,
Հայկո ջան,
Կայնել ես քարի վրա,
Վարսո ջան,
Հո՛պ, թըռի...

Աղբեր ունեմ ավչի ա,
Հայկո ջան,
Մեջը բարակ ղամշի ա,
Վարսո ջան,
Հո՛պ, թըռի...

ԱՅԲ, ԲԵՆ, ԳԻՄ



Այբ, բեն, գիմ, դա, եչ, զա, այբ, բեն, գիմ, դա, եչ, զա, դա, եչ, զա

Այբ, բեն, գիմ,
Դա, եչ, զա,
Այբ, բեն, գիմ,
Դա, եչ, զա,
Դա, եչ, զա:

Ճե, մեն, յի (հի),
Նու, շա, ո,
Ճե, մեն, յի (հի),
Նու, շա, ո,
Նու, շա, ո,

Է, ըթ, թո,
Ժե, ինի, լյուն,
Է, ըթ, թո,
Ժե, ինի, լյուն,
Ժե, ինի, լյուն:

Չա, պե, ջե,
Ռա, սե, վեվ,
Չա, պե, ջե,
Ռա, սե, վեվ,
Ռա, սե, վեվ,

Խե, ծա, կեն,
Հո, ձա, ղատ,
Խե, ծա, կեն,
Հո, ձա, ղատ,
Հո, ձա, ղատ:

Տյուն, րե, ցո,
Վյուն, փյուր, քե,
Տյուն, րե, ցո,
Վյուն, փյուր, քե,
Վյուն, փյուր, քե,

ԷՍ ԱՌՈՒՆ

Գնայուն
քնքշաբար սիրով

Էս ա-ռուն ջուր է գա-լիս գա-լիս է, գա-լիս է սեր ա-նե
մի տե-սեք ո՞ւր է գա-լի.

Էս առուն ջուր է գալի,
Մի տեսեք - ո՞ւր է գալի,
Գալիս է, գալիս
Սեր անե:

Քենին մահանա արել,
Իմ յարին հյուր է գալի.
Գալիս է, գալիս է
Սեր անե:

Վարդ եմ քաղել մաղերով,
Վեր եմ դրել շաղերով.
Արի՛, իմ սիրեկան քուր,
Առաջ գամ քեզ տաղերով:

Տանը տակին կա նռոնի,
Ես բարձ բերեմ՝ դու կրոնի,
Ես, դու մի բաղում պիտենք,
Դու՝ չինարի, ես՝ նռնի:

ԱՂՋԿԵՔ, ՊԱՐ ԲՌՆԵՑԵՔ

Կենսուրախ, աշխույժ



Աղ-ջը-կե՛ք, պար բրո-նե-ցեք, Ար-մի-կի ե -րես գո-վե-ցեք,



Ա՜յ ե-րես, շար-մաղ ե-րես, դու մեզ չը-թող -նես սեւ-ե-րես:

Աղջըկե՛ք, պար բրոնեցեք,
Արմիկի երես գովեցեք.
Ա՜յ երես, շարմաղ երես,
Դու մեզ չըթողնես սեւերես:

Աղջըկե՛ք, պար բրոնեցեք,
Արմիկի աչեր գովեցեք,
Ա՜յ աչեր, սիրուն աչեր,
Արեւի պես փայլուն աչեր:

Աղջըկե՛ք, պար բրոնեցեք,
Արմիկի կրոներ գովեցեք,
Ա՜յ կրոներ, ուժեղ կրոներ,
Դուք կըշարժեք մեծ-մեծ լեռներ:

Աղջըկե՛ք, պար բրոնեցեք,
Արմիկի հասակ գովեցեք,
Ա՜յ հասակ, բարձրը հասակ,
Քեզ կվայելե, դափնյա պըսակ:

ՎԻՃԱԿԻ ԵՐԳ

Չափավոր եւ ուրախ



Մա-նի ա-սեմ ու շա-րեմ, ջա՜ն, ծա-ղիկ, ջա՜ն, ջա՜ն,



լըց-նեմ տոպ-րակ ու կա-րեմ, ջա՜ն, վի-ճակ, ջա՜ն, ջա՜ն,

Մանի ասեմ ու շարեմ,
Ջա՜ն, ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն,
Լըցնեմ տոպրակն ու կարեմ,
Ջա՜ն, վիճակ, ջա՜ն, ջա՜ն:

Ծաղիկ ունեմ նամրընջի,
Ջա՜ն, ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն,
Տըղա, վեր արի փընջի,
Ջա՜ն, վիճակ, ջա՜ն, ջա՜ն:

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Ջա՜ն, ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն,
Ոսկին ծալեծալ կուզեմ,
Ջա՜ն, վիճակ, ջա՜ն, ջա՜ն:

Ծաղիկ ունեմ, ալայա,
Ջա՜ն, ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն,
Ալաչի, ալվալայա,
Ջա՜ն, վիճակ, ջա՜ն, ջա՜ն:

Արեւը կամար-կամար,
Ջա՜ն, ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն,
Կապել ես ոսկե քամար,
Ջա՜ն, վիճակ, ջա՜ն, ջա՜ն:

Սարեն կըգա ձիավոր,
Ջա՜ն, ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն,
Մեր տունը չարդախավոր,
Ջա՜ն, վիճակ, ջա՜ն, ջա՜ն:

Հըրես եկավ իմ աղբեր,
Ջա՜ն, ծաղիկ, ջա՜ն, ջա՜ն,
Երեք օրվան թագավոր,
Ջա՜ն, վիճակ, ջա՜ն, ջա՜ն:

ԴԱՆ, ԴԱՆ, ԴԱՆԵԴԱՆ

Չափավոր եւ կատակով



Դա՛ն, դա՛ն, դա-նե-դան, ձի հավ մը կեր, կո-լոտ էր, դա՛ն, դա՛ն, դա-նե-դան.
փողցե փո-ղոց ման կու-գեր, դա՛ն, դա՛ն, դա-նե-դան.
ինչ օր գը-տեր՝ կուլ կու-տեր, դա՛ն, դա՛ն, դա-նե-դան:

Դա՛ն, դա՛ն, դանեդա՛ն,
Ձի հավ մը կեր, կոլոտ էր,
Դա՛ն, դա՛ն, դանեդա՛ն.
Փողցե-փողոց ման կու գեր,
Դա՛ն, դա՛ն, դանեդա՛ն.
Ինչ օր գըտեր՝ կուլ կու տեր,
Դա՛ն, դա՛ն, դանեդա՛ն:

Պուտուկ փըլավ եփեցի
Կոլոտ հավուն կերցուցի:
-Կոլո՛տ հավ, ձի ձու մ՚ածա:
Տարա տըվի դարբընին.
- Դարբի՛ն, ձի դանակ մը տուր:
Դանակ տըվի հովըվուն.
-Հովի՛վ, ձի մաքի մը տուր:
Մաքին տըվի աստրծուն.
-Աստվա՛ծ, ձի ախպեր մը տուր:
-Ախպե՛ր, ախպե՛ր, ես քեզ շուն,
- Ի՞նչ ես բարձե քու իշուն:
-Խընգընե խինե, ապըրշում:

Օձը տեսա ճըլպըտուն,
Փախավ մտավ Սալբու տուն:
Սալբի նըստեր, սազ կ՚անա,
Գըլուխ կորեր, նազ կ՚անա,
Հավերն եկան, բըշ կ՚անա:

ԽՆԿԻ ԾԱՌ

Գնայուն եւ կայտառ



Մեր դը-ռա-նը խընն-կի ծառ, Գյու-լո՜ւմ ջան,
Խընն-կե-նին ա բե-բել բար, Գյու-լո՜ւմ ջան,



Ձեր դը-ռա-նը խընն-կի ծառ, Գյու-լո՜ւմ ջան,
Իմ խո-բո-տիկ պըզ-տիկ յար Գյու-լո՜ւմ ջան:

Մեր դըռանը խընկի ծառ,
Գյուլո՜ւմ ջան,
Ձեր դըռանը խընկի ծառ,
Գյուլո՜ւմ ջան,
Խընկենին ա բերել բար,
Գյուլո՜ւմ ջան:
Իմ խորոտիկ պըզտիկ յար
Գյուլո՜ւմ ջան:

Մեր դըռանը խընկի ծառ,
Նախշուն բլբուլ վըրեն թառ,
Երբար ու գար, շորոր տար,
Սիրուն յարին օրոր տար:

Մեր դըռանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրեն թառ,
Գընար ու գար, շըվին տար,
Անուշ յարի թեւին տար:

Մեր դըռանը խընկի ծառ,
Ոսկի բըլբուլ վըրեն թառ,
Կարմիր խընձոր անել տար,
Ալվան ծաղիկ տանել տար:

ԿԹԻ ԵՐԳ «ԻԼԻԼԻ, ԴԻՇԻԼԻ»

Հինգ էծ ու-նեմ ու-լե-րով, ի-լի-լի, դի-լի-լի:

Հինգ էծ ունեմ ուլերով,
Իլիլի, դիլիլի,
Կաթ կըկըթեմ դույլերով,
Իլիլի, դիլիլի,
Մեր կըչափեմ կալ չափով,
Իլիլի, դիլիլի,
Եղ կըհանեմ լվի տըկով,
Իլիլի, դիլիլի:

ԽՆՈՑՈՒ ԵՐԳ

Հա-րի՛, հա-րի՛, խը-նո-ցի, մե-ջըդ բա-րի՛, խը-նո-ցի:

Հարի՛, հարի՛, խընոցի,
Մեջըդ բարի՛, խընոցի,
Ունկըդ բարակ, խընոցի,
Մեջըդ կարագ, խընոցի:

Փլավ կէփեմ եղ չըկա,
Փեսեն եկավ, տեղ չըկա՛,
Հարի՛, հարի՛, խընոցի,
Բերքըդ բարի՛, խընոցի:

ԲՈԼՈՃԿԻ ԵՐԳ



Զարկ բո-լո-ճիկ, զարկ, դու զարկ, ես խա-ղամ.
ճա-շիկ դու պա-ղի, սա-րակ դու քա-ղի,

Զարկ բո-լո-ճիկ, զարկ, դու զարկ, ես խա-ղամ.
ճա-շիկ դու պա-ղի, սա-րակ դու քա-ղի,

Զարկ բոլոճիկ, զարկ,
Դու զարկ, ես խաղամ,
Զարկ, բոլոճիկ, զարկ,
Դու զարկ, ես խաղամ:

Ճաշիկ դու պաղի,
Սարակ դու քաղի,
Ճաշիկ դու պաղի,
Սարակ դու քաղի:

ՃԱԽԱՐԱԿԻ ԵՐԳ



Հո՛պ, մա-բալ, հո՛պ, մա-բալ, հո՛պ, մա-բալ ջան, ճախ-բա-կի ո-
Հո՛պ, մա-բալ, հո՛պ, մա-բալ, հո՛պ, մա-բալ ջան, ճախ-բակ մա-նո-



տը փուշ - ի.
ղը ղուշ - ի:

Հո՛պ, մարալ, հո՛պ, մարալ,
Հո՛պ, մարալ ջա՜ն,
Ճախրակի ոտը փուշ ի.

Հո՛պ, մարալ, հո՛պ, մարալ,
Հո՛պ, մարալ ջա՜ն,
Ճախրակ մանողը ղուշ ի:

Ճախրակի ոտը ուռի,
Ճախրակ մանողը ծուռ ի:

Ճախրակի ոտը տանձ ի,
Ճախրակ մանող կուտան ձի:

Ճախրակի ոտը նուշ ի,
Ճախրակ մանողն անուշ ի:

ԹԱԳՎՈՐԻ ՄԵՐ, ԴՈՒՍ ԱՐԻ



Թագ-վո՛-րի մեր, դո՛ւս ա-րի, տես քե ին-չեր ենք բե-րե,



Թագ-վո՛-րի մեր, դո՛ւս ա-րի, քե ջուր բե-րող ենք բե-րե:

Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տես քե ինչեր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե ջուր բերող ենք բերե:
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տես քի ինչե՞ր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե կով կըթող ենք բերե:

Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տես քե ինչե՞ր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե թաղդ ավլող ենք բերե:

Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Տես քե ինչե՞ր ենք բերե,
Թագվո՛րի մեր, դո՛ւս արի,
Քե գլուխ դըմբող ենք բերե:



ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ԾՈՒՂԲՈՒԾՈ՞Ւ *5*

Արտուտիկ 5
Մեղու 5
Աքաղաղն ու կտուրը 6
Փիսոն 6
Ծիտիկի օրորքը 6
Շունը 7
Աղվեսն եկավ 7
Փիսիկի գանգատը 8
Ծիտը եւ բազեն 9
Լուսաբացին 9
Առավոտը գյուղում 10
Պոչատ աղվեսը 11
Գրիչ 11
Առաջին ձյունը 11
Պապն ու շաղգամը 12
Բզեզի դպրոցը 13
Պույ-պույ մուկիկը 14

ԼԻՆՈՒՄ Է, ՉԻ ԼԻՆՈՒՄ *18*

Ճամփորդները 18
Ուլիկ 19
Անհաղթ աքլորը 20
Ով աշխատի, նա կուտի 21
Սուտասանը 22
Երեք արջի հեքիաթը 23
Պոչատ աղվեսը 25
Ծիտը 27
Երկինքը փուլ է գալիս 28
Հազարան բլբուլ 30

ԷՆ Ի՞ՆՉՆ Է, Ի՞ՆՉԸ *38*

ԱՌԱԾԱՆԻ *40*

ՄԿԱՆ ԹԱԿԱՐԴ *41*

Էկե դուկե տըմըզա 41
Բուրամատն ասաց 41
Ճվիկ-ճվիկ 42
Ճկույթն ասաց 42
Ինչպե՞ս կուտես 42
Ծուղրուղո՜ւ, սանամեր 43
Ափ ու պտղունց 43
Մուկն ու կատուն 43
Ճնճղուկն ու կատուն 44
Մկան թակարդ 44
Թզուկներ եւ հսկաներ 45
Կատուն եկավ 45
Ճանաչիր դրոշակդ 46
Ծովն ալեկոծվում է 46
Երկու սառնամանիք 47
Թռչուններն ու վանդակը 47
Ուրախ երեխաներ 48
Ասեղ, թել, հանգույց 48
Հինգ այծատեր 49

ԵՐԳԱՐԱՆ *49*

Արեւ, արեւ 49
Հո՛պ, բոի 50
Այբ, բեն, գիմ 51
Էս առուն 52
Աղջկեք, պար բռնեցեք 53
Վիճակի երգ 54
Դան, դան, դանեդան 55
Խնկի ծառ 56
Կրի երգ «Իլիլո, դիլիլո» 57
Խնոցու երգ 58
Բոլոճկի երգ 58
Ճախարակի երգ 59
Թագվորի մեր, դուս արի 60

Նկարիչ եւ գեղ. խմբագիր՝ **Արտակ Բաղդասարյան**
Սրբագրիչ՝ **Արփիկ Համբարձումյան**
Տեխ. խմբագիր եւ էջադրող՝ **Սերոբ Սարատիկյան**

Ստորագրված է տպագրության 15.06.95թ.:
Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/16: Տպաքանակը 35000:
ՀՀ Լուսավորության Նախարարության
«Նոր դպրոց» հրատարակչություն:
Երեւան, Սպորտինտերնի 73:
Տպագրված է «ՏԱՐՈՆ» փակ բաժնետիրական
ընկերության տպարանում:
Երեւան, Իսակովի պող. 48: